

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ինչ Սպասել Ուաշինգթոնեան Բանակցութիւններէն

Միացեալ Նահանգներու պետական քարտուղար՝ Էնթոնի Պլինքընի միջնորդութեամբ, Ուաշինգթոնի մէջ տեղի կ'ունենան Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանի եւ Ատրպէյճանի իր պաշտօնակից ճեյիուն Պայրամովի միջեւ բանակցութիւններ, որոնց բովանդակութեան եւ արդիւնքներու մասին հազուագիւտ տեղեկութիւններ միայն կը հաղորդուին, որոնք կը կրեն ընդհանրական բնոյթ:

Նախքան այս հանդիպումը Պլինքըն հեռաձայնային խօսակցութիւններ ունեցաւ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն հետ, ապա երկու երկիրներու արտաքին գործոց նախարարները ժամանեցին Ամերիկայի մայրաքաղաքը:

Առաջին անգամ չէ որ, քարտուղար Պլինքընի նախաձեռնութեամբ տեղի կ'ունենան եռակողմ մամն հանդիպումներ, սակայն այս վերջինը կը տարբերի միւսներէն այն իմաստով որ, ան նախատեսուած է շարունակուելու մի քանի օր:

Ներկայիս, Հայ-Ատրպէյճանական բանակցութիւնները տեղի կ'ունենան երեք տարբեր հարթակներու վրայ՝ Ամերիկեան, Եւրոպական եւ Ռուսաստանեան: Այս վերջինը գրեթէ կորսնցուցած է իր հեղինակութիւնը գործընթացին վրայ ազդելու իմաստով: Մոսկուա կամաց-կամաց կը կորսնցնէ նաեւ իր ազդեցութիւնը տարածաշրջանէ ներս: Անկարող գտնուելով 44-օրեայ պատերազմի աւարտին ստորագրուած՝ Նոյեմբեր 9-ի համաձայնութեամբ իր ստանձնած պարտաւորութիւնները կատարելու մէջ, Ռուսաստան արդէն իսկ ծախողած է իր միջնորդական առաքելութեան մէջ: Ատրպէյճան օգտուելով ստեղծուած այս իրավիճակէն կ'անտեսէ Ռուսական խաղաղապահ ուժերու ներկայութիւնը, եւ ոչ միայն փակ կը պահէ Լաչինի միջանցքը այլ եւ կ'ընդլայնուի Ռուսական հսկողութեան վստահուած գօտիներէն ներս:

Հայկական քաղաքական շրջանակներուն մօտ մամն հանդիպումները սկսած են կորսնցնել իրենց իմաստը, նկատի առնելով որ, նախագահական թէ նախարարական մակարդակով կայացած բոլոր նախկին հանդիպումներու ընթացքին առնուած որոշումներն ու յանձնարարութիւնները մնացած են թուղթի վրայ: Այս անգամ եւս ակնկալիքները մեծ չեն Ուաշինգթոնեան հանդիպումէն: Միացեալ Նահանգները թեւ կը

Խօսելով Միրզոյեան-Պայրամով Հանդիպումի Մասին «Երկխօսութիւնը Առանցքային Է Կայուն Խաղաղութեան Համար», Կ'ըսէ Պլինքըն

Միացեալ Նահանգներու մայրաքաղաքի Արլինկթըն արուարձանին մէջ նախ կայացած են պետական քարտուղար՝ Էնթոնի Պլինքըն առանձին հանդիպումները Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներուն հետ, որոնց յաջորդած է եռակողմ, ապա՝ Արարատ Միրզոյեանի եւ ճեյիուն Պայրամովի երկկողմ հանդիպումը: Ըստ Պետական Քարտուղարութեան պաշտօնեաներուն՝ ուաշինկթընեան բանակցութիւնները քանի մը օր պիտի տևեն:

Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներու հանդիպման վերաբերելով թուիթըրով գրառում կատարած է ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պլինքընը՝ ընդգծելով, որ «Երկխօսութիւնը առանցքային է Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ կայուն խաղաղութեան հասնելու համար»:

Պետական Քարտուղարութեան փոխօնակ վետանթ Փաթելը ճեպագրուցի ընթացքին արձագանգելով Ուաշինկթընի մէջ Հայ-ատրպէյճանական բանակցութիւններուն վերաբերելով հարցումներուն, մասնաւորապէս ըսած է. «Պե-



Պետական քարտուղար՝ Էնթոնի Պլինքըն կը փորձէ ցոյց տալ կողմերուն միջեւ համերաշխութիւն

տական քարտուղարը կը կարծէ, որ ուղղակի երկխօսութիւնը առանցքային է խնդիրներու լուծման եւ կայուն խաղաղութեան հասնելու համար: Եւ այդ բան մըն է, որուն մենք պիտի շարունակենք մեծ ուշադրութիւն դարձնել»:

Արարատ Միրզոյեանը, ճեյիուն Պայրամովը եւ Էնթոնի Պլինքընը կայացած հանդիպման ընթացքին քննարկած են տարածաշրջանին մէջ ստեղծուած անվ-

տանգային իրավիճակին, երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացի հարցեր:

Ըստ հայկական կողմին՝ անոնք անդադարած են Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով ստեղծուած մարդասիրական իրավիճակին:

Թուրք Պատմաբան Փրոֆ. Եաշար Քորայի Դասախօսութիւնը «ՄԴՀԿ-ի Գործունէութիւնը 1908-ի Սահմանադրութենէն Ետք» Նիւթին շուրջ



Փրոֆ. Եաշար Քորայ ելոյթ կ'ունենայ Փասատինային ՀԿԲՄ-ի կեդրոնէն ներս

Ապրիլ 28-ին, Փասատինայի ՀԿԲՄ-ի կեդրոնի սրահէն ներս տեղի ունեցաւ Թուրք պատմաբան՝ Եաշար Քորայի դասախօսութիւնը նուիրուած Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան գաղափարական գործունէութեան՝ 1908 թուականի Երիտթուրքական յեղափոխութիւնէն յետոյ:

Միջոցառումին ներկայ էին ՄԴՀԿ կեդրոնական վարչութեան եւ վարիչ Մարմինի անդամներ,

տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ Հայ համայնքի անդամներ:

Միջոցառումը կազմակերպող՝ Մասիս Հրատարակչական կողմէ բացման խօսքով հանդէս եկաւ Քրիստինէ Աղախանեան, որ տեղեկութիւններ տրամադրեց Massis Publishing-ի մասին, որ իր մէջ կը ներառէ «Մասիս» Շաբաթաթերթ-

Մարդահամարի Նախնական Տուեալներով՝ ՀՀ Բնակչութեան Թիւը Կազմած Է 2 Միլիոն 928 Հազար 914

2022 թուականի Հոկտեմբերի դրութեամբ Հայաստանի մշտական բնակչութիւնը 2 միլիոն 928 հազար 914 մարդ կազմած է: Այս թիւին մէջ ներառուած են այն մարդիկ, որոնք սովորաբար Հայաստան կը բնակին, սակայն մինչեւ մէկ տարի ժամկէտով բացակայած են երկրէն:

Վիճակագրական կոմիտէն հրապարակած է անցեալ տարի իրականացուած մարդահամարին նախնական տուեալները՝ բացի մշտական բնակչութեան թիւէն, ներկայացնելով նաեւ առկայ բնակչութեան ցուցանիշը: Մարդահամարի պահին Հայաստան գտնուող անձերու թիւն ալ 2 միլիոն 638 հազար 917 կազմած է:

Վերջին անգամ մարդահամար կատարուած էր 2011-ին: Այս տարիներու ընթացքին մշտական բնակչութեան թիւը նուազած է շուրջ 90 հազարով, իսկ հարցումներու կայացման պահուն այստեղ գտնուողներունը՝ գրեթէ 233 հազարով:

Հոկտեմբերին կատարուածը անկախ Հայաստանի պատմութեան երրորդ մարդահամարն է:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Պտղատու Այգում Կանգնած Խաղաղապահ «Խրտուհիակր»

3. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նոյեմբերի 9-ի յայտարարութեան ստորագրումից յետոյ ամէն անգամ, երբ Ատրպէյջանը յայտարարութեան դրոյթներէ հերթական խախտումն է թոյլ տալիս եւ արցախահայրութեան անվտանգութեան ու բնականոն կենսագործունէութեան դէմ վայրագ, անմարդկային գործողութիւններ իրականացնում՝ հրազարի խախտում, Լաչինի միջանցքի փակում, տիրութիւն եւ այլն, բնականօրէն ի յայտ է գալիս ռուսական խաղաղապահ առաքելութեան լեգիտիմութեան հարցը:

Խաղաղապահ գորակազմի գործունէութիւնն Արցախում իր ֆունկցիոնալութեամբ չի շեղում է պտղատու այգում տեղակայուած խրտուհիակրն (այլ համեմատութիւն այս դէպքում երեւի թէ հնարաւոր է), որի տեսքը պէտք է վախեցնի թռչուններին եւ ծառերի մրգերը պաշտպանի կտցահարումներից: Մինչդեռ թռչուններն անարգել ու լարիշաբար վնասում են ծառերի պտուղները՝ արհամարհելով խրտուհիակր ներկայութիւնը, քանի որ բացայայտել են վերջինիս ուղի եւ ինչպիսին լինելը:

Արդ, խաղաղապահութեան նպատակը, եթէ խաղաղութեան երաշխաւորումը, կոնկրետ տեղանքում ստանձնած պարտաւորութիւնների բարեխիղճ կատարումը՝ տեղի բնակչութեան անվտանգութեան ապահովումը, մասնաւորապէս՝ Ատրպէյջանի սանձարձակ վարքագիծը գսպելը չէ, ապա արդեօք նպատակաշարժա՞ր է շարունակել «ռեզերվացուած» պահել այդ կարեւոր եւ պատասխանատու մասնակցը: Գուցէ ժամանակն է (եւ պէտք է) ընդունել առաքելութեան ձախողման, իր ուժերից վեր լինելու փաստը, «հաւաքել իրերն» ու տեղ բացել այլ՝ գործունակ եւ

կարող, Արցախում իր ստանձնած պարտաւորութիւններն աչքաթող անելը ու քրտանական պատերազմով չպայմանաւորող խաղաղապահ կոնտինգենտի համար: Նկատենք, որ թէ՛ ՀՀ-ն, թէ՛ Արցախի ղեկավարութիւնը քանիցս կողմ են արտայայտուել Արցախում ռուս խաղաղապահների անժամկէտ առկայութեանը, միջազգային մանդատով օժտելուն, մինչդեռ Ատրպէյջանը ոչ միայն չի ստորագրել խաղաղապահների մանդատը, այլև յայտարարել է նրանց ժամանակաւոր լինելու մասին՝ առաջնորդուելով առուփախի տրամաբանութեամբ՝ առաքելութեան աւարտին ընդառայ, օգտուելով խաղաղապահների անգործութիւնից, հասցնել Արցախից պոկել ինչ հնարաւոր է (նախ՝ Խծաբերդ, Հին Թաղեր, ապա՝ Փառուխ, Քարապուխ, յետոյ՝ Լաչինի միջանցքի արգելափակում): Կարձասած՝ հասնել սեփական՝ Նոյեմբերի 9-ի յայտարարութեան ոգուն եւ տառին հակասող օրակարգի կենսաքի կոչմանը, այն է՝ «Ղարաբաղի հարց գոյութիւն չունի»:

Յիշեցնենք, որ նախորդ տարուայ վերջին՝ Կառավարութեան նիստի ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինեանը բարձրացրել էր խաղաղապահների մանդատի հարցը՝ նշելով՝ եթէ Ռուսաստանն օբիեկտիւ կամ սուբիեկտիւ պատճառներով չի կարողանում ապահովել կայունութիւնն ու անվտանգութիւնը Լեռնային Ղարաբաղում, պէտք է քննարկոււմ նախաձեռնի ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում եւ ռուսական խաղաղապահ գործառնմբին ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի մանդատով օժտելու կամ Լեռնային Ղարաբաղ լրացուցիչ բազմազգ խաղաղապահ գործառնմբ ուղարկելու հարց բարձրացնի:

Վարչապետը նաեւ նշել էր, որ

Հայաստանը Լեռնային Ղարաբաղում ռուսական խաղաղապահ գործառնմբի համոզուած կողմնակիցն ու ջատագովն է՝ միաժամանակ անընդունելի համարելով «Լեռնային Ղարաբաղի հայաթափման լուս վկան դառնալու» Ռուսաստանի աւելի ու աւելի տեսանելի դարձող գործելակերպը»:

Կառավարութեան այսօրուայ նիստն էլ, ինչպէս 2020 թուականից Նոյեմբերի 9-ի յայտարարութեան ստորագրումից յետոյ տեղի ունեցած բազմաթիւ նիստեր, մեկնարկեց «ռուս խաղաղապահ գորակազմ» կապակցութիւնը հերթական անգամ հղովումով: Հոյովումը, ինչպէս նախկինում, այս անգամ եւս Արցախում խաղաղապահների թողութեամբ եւ Ատրպէյջանի մանակցութեամբ արձանագրուած հերթական «ինցիդենտի» համատեքստում էր՝ Լաչինի միջանցքում ապօրինաբար տեղակայուած ստուգիչ անցագրային կէտի համատեքստում:

«ՌԴ խաղաղապահ գորակազմերը պէտք է վերահսկողութեան տակ պահէ Լաչինի միջանցքը եւ այսպիսով ապահովէ միջանցքի բնականօրէն գործունէութիւնը: Այսինքն՝ բացի ՌԴ-ից, որեւէ մէկը Լաչինի միջանցքում չպէտք է վերահսկողութիւն իրականացնի, Ատրպէյջանն էլ չպէտք է խոչընդոտի Լաչինի միջանցքով ազատ երթելակցութեանը», - յայտարարեց վարչապետը, որը, նկատենք, նոյնաբովանդակ յայտարարութիւն, գրեթէ նոյն ձեւակերպմամբ արել էր դեռ ամիսներ առաջ՝ ս.թ. Յունուարին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ, երբ «Լաչինի միջանցքը բացառապէս մարդասիրական նպատակներով օգտագործելու», եւ այդ նպատակին ծառայող «անցակէտի» տեղադրման մասին խօսող ռուսատրպէյջանական պրոպագանդան արդէն իսկ դրել էր շրջանառու-

թեան մէջ:

«Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ գորակազմը պէտք է ապահովէ Լաչինի միջանցքի բնականօրէն գործունէութիւնը եւ դա յատակ ձեւակերպուած է եռակողմ յայտարարութեան մէջ: Լաչինի միջանցքը պէտք է լինի ՌԴ խաղաղապահ ուժերի վերահսկողութեան ներքոյ: Որեւէ այլ սուբիեկտ Լաչինի միջանցքում վերահսկողութիւն չպիտի ունենայ», - մասնաւորապէս յայտարարել էր վարչապետը՝ այսպիսով ուղերձ յղելով Ռուսաստանին՝ նախականիելու միջանցքի վերահսկողութեան նկատմամբ հաւակնութիւններ ունեցող սուբիեկտի՝ Պաքուի գործողութիւնները: Սակայն ուղերձն այդ, ինչպէս երեւում է, այդպէս էլ «տեղ չհասաւ», ինչպէս որ ՀՀ կառավարութեան նիստերի ժամանակ Փաշինեանի յղած միւս «դիւանագիտական նոտաները»:

Ովքեր հետեւում են Կառավարութեան նիստերի ժամանակ վարչապետի ներածական ելույթներին, նկատած կը լինեն՝ մէկ անգամ չէ, որ վարչապետը բարձրացրել է ռուս խաղաղապահների գործունէութեան արդիւնաւետութեան հարցը: Այդ հարցը շօշափող՝ Փաշինեանի ելույթները պարունակում են մի կողմից խաղաղապահներին ուղղուած՝ իրենց «թղթով ստանձնած» պարտաւորութիւնների կատարման վերաբերեալ չի շեղում՝ յորդորներ, միւս կողմից էլ՝ Ատրպէյջանի նա-

Շար. ք էք 6

Դէպի Ուաշինգթոն Հակարիի Կամրջի Անցակէտով

ՅԱԿՈՒ ԲԱՂԱՆԵԱՆ

Ատրպէյջանի տարածած տեսանկյանը առնչութեամբ, որտեղ հակակական համարանիշներով մեքենաներով քաղաքացիներ են անցնում Հակարի կամրջի վրայ տեղակայուած ատրպէյջանական անցակէտի անձնագրային ստուգում, յայտարարութիւն է տարածել Արցախի կառավարութեան տեղեկատուական շտապը: «Ինչ վերաբերում է ատրպէյջանական լրատուամիջոցների կողմից շահարկուող դէպքին, ապա այդ անձինք երկկողմանի շրջափակման մէջ գտնուող Շուշիի շրջանի չորս համայնքների բնակիչներ են, որոնք անցակէտի տեղադրման պատճառով մնացել էին Գորիսում ու ռուս խաղաղապահների ջակցութեամբ վերադառնում էին իրենց բնակավայր եւ իրենց համար էլ անակնկալ կերպով կանգնեցուել են ատրպէյջանացի ծառայողների կողմից:

Անընդունելի են ատրպէյջանական կողմի բոլոր ջանքերը պահանջներու ապօրինի անցակէտը եւ որեւէ կերպ վերահսկելու եւ խոչընդոտելու Արցախի քաղաքացիների, մեքենաների ու բեռների տեղադրումը: Ուստի, վերահաստատում ենք, որ Արցախ-Հայաստան երկկողմանի տեղաշարժը կազմակերպոււմ է բացառապէս ՌԴ

խաղաղապահ գորակազմի եւ կարմիր խաչի միջազգային կոմիտէի կողմից եւ ուղեկցութեամբ՝ ապահովելու համար Արցախի քաղաքացիներին նուազագոյն անվտանգութիւնն այդ ճանապարհին: Տեղաշարժի կարիք ունեցող անձինք պէտք է առ այսօր գործող ընթացակարգերով դիմեն համապատասխան պետական մարմիններ՝ նշուած մեխանիզմներով խնդրին լուծում տրելու նպատակով: Արցախի տեղեկատուական շտաբի տարածած հաղորդագրութիւնը տալով հարցերի որոշակի պատասխան, այդուհանդերձ առաջացնում է նաեւ հարցեր: Մասնաւորապէս, նշում է, որ քաղաքացիները յայտնուել են անակնկալ վիճակում: Բայց միթէ՞ մինչ անցակէտը չի եղել: Որեւէ պատկան կառուց կամ ստորաբաժանում, որը կը կանխէր այդ «անակնկալը» եւ թոյլ չէր տայ ստեղծել իրավիճակ, որով կարող էր դառնալ ատրպէյջանական քարոզչութեան խաղաքարտ: Իհարկէ հարցն այն չէ, թէ Ատրպէյջանը դրանով կարող է խաբել միջազգային հանրութիւնից ինչ որ մէկին, եթէ այդ ինչ որ մէկն ինքը չունի «խաբուելու» ցանկութիւն ու մտադրութիւն: Բայց, այդուհանդերձ, հարցը առկայ է եւ վերստին առկայ է հայկական կողմի՝ Արցախի եւ Հայաստանի որեւէ պատկան

կառուցի աշխատանքային պատասխանատուութեան հարցը:

Կրկնեմ, եթէ իսօքը «անակնկալի», այլ ոչ թէ իրավիճակը պարզապէս այդպէս մատուցելու եւ հանրային աղմուկը լռեցնելու մասին է: Որովհետեւ այդ պարագայում առաջացող հարցն այլ է՝ ի՞նչ համաձայնութեան շրջանակում է ստացուել «անակնկալը», որ դարձել է ատրպէյջանական տեսանկյան: Ընդ որում, թերեւս ուշադրութեան է արժանի մի հանգամանք, որը գուցէ «յարակից» է, սակայն այդուհանդերձ հետաքրքիր՝ տեսանկյան տարածում է Ուաշինգթոնում Հայաստանի եւ Ատրպէյջանի արագորձնախարարների քննարկմանն ընդառայ: Իսկ ի՞նչի «փաստարկ» է այդ տեսանկյանը: «Փաստարկ» կամ «օրինակ» է այն մասին, որ Հայաստանի քաղաքացիներն ու Ատրպէյջանի սահմանապահները կարող են հանգիստ հաղորդակցուել իրաւական ընթացակարգով: Պատահաբար է ստացուել, որ այդ «օրինակը» ի յայտ է գալիս ուաշինգթոնեան հանդիպման անմիջապէս շեմին՝ առաւել եւս հաշուի առնելով «ուղիղ երկխօսութեան» բանաձեւի բարձրամասն ման գամանքը, թէ՞ «հանդիպումը» դէ ֆակտօ «մեկնարկել» է Հակարիի կամրջից:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ ՇՐՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝ ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՐԲԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ ԿԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ ԿԱՂԵ ԱԶԱՊԱՐԵԱՆ MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Անդրանիկ Քոչարեանը Խնդրեց 44-Օրեայ Պատերազմի Հարցերով ՔՐՄԻՅ Յանձնաժողովի Ժամկետը Երկարաձգել Եւս 6 Ամիսով

Մայիս 2-ին, Ազգային ժողովի հերթական նիստին 44-օրեայ պատերազմին հանգամանքները ուսումնասիրող ՔՐՄԻՅ Յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը Ազգային ժողովին ներկայացուց առաջարկ այդ յանձնաժողովի աշխատանքներուն ժամկետը երկարաձգելու մասին:



ՔՐՄԻՅ Յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

Ինչպէս նշեց Անդրանիկ Քոչարեանը, ՔՐՄԻՅ Յանձնաժողովը իր աշխատանքներու ընթացքին պահանջած եւ ստացած է 4154 գաղտնի եւ յոյժ գաղտնի բնագրային ու պատկերային փաստաթուղթ՝ աւելի քան 14 հազար էջ ծաւալով, որոնց մանրակրկիտ ուսումնասիրութիւնը դեռ կը շարունակուի: «Որոշուել է հրաւիրել յանձնարարները, որի հիման վրայ հրաւիրուել են եւ շարունակուել են հրաւիրուել գործող ու նախկին զինուորական եւ քաղաքական բարձրաստիճան պաշտօնեաներ», յայտնեց ան:

«Հրաւիրեալները լուծմանը շարունակուելու եւ փաստաթղթերի նոր ծաւալն ուսումնասիրելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել յանձնաժողովի աշխատանքների յաջորդ փուլը, որի հանար խիստ անհրաժեշտ է յանձնաժողովի աշխատանքների ժամկետը երկարացնել եւս 6 ամսով», նշեց Անդրանիկ Քոչարեանը եւ յաւելեց, որ այս պիտի ըլլայ վերջին երկարացումը:

Անդրանիկ Քոչարեանի խօսքով՝ յանձնաժողովին դիմած են պատերազմի բազմաթիւ մասնակիցներ եւ զոհուածներու հարազատներ, որոնք նոյնպէս անհատական կարգով յանձնաժողովին կը ներկայացնեն բազմաթիւ տեղեկութիւններ եւ տեսաձայնային նիւթեր:

ՀՀ Արտաքին Պարտքը Նուազած Է Ե՛ւ Դրամային, Ե՛ւ Տոլարային Արտայայտութեամբ

ՀՀ Կառավարութեան պարտքը 2022 թ. Դեկտեմբեր 31-ի դրութեամբ կազմած է 3 թրիլիոն 969 միլիարդ դրամ կամ 10 միլիարդ 86 միլիոն տոլար, պարտք-ՀՆԱ յարաբերակցութիւնը հակասորէն նուազած է՝ կազմելով 46,7 տոկոս՝ կանխատեսուած 60,2 տոկոսի փոխարէն:

առումով արձանագրուած է մոտաքերու աճ՝ բացառութեամբ մաքսատուրքերու առումով մոտաքերու:

Այս մասին ըսաւ ՀՀ Ելեւմուտքի նախարար Վահէ Զովհաննիսեանը Հայաստանի Հանրապետութեան 2022 թուականի պետական պիւլտէի կատարման տարեկան հաշուետուութեան հաւանութիւն տալու մասին հարցի զեկուցման:

Յովհաննիսեան նշեց նաեւ, հարկապիւտէտային քաղաքականութեան ջանքերը թոյլ տուած են ապահովելու ՀՆԱ-ի համեմատութեամբ պետական պիւլտէի պակասուրդի նուազում: Որպէս արդիւնք՝ պիւլտէով ծրարագրուած՝ ՀՆԱ-ի նկատմամբ 3 տոկոս պակասուրդը տարուան ընթացքին վերանայուած է եւ փաստացի կազմած է 2,1 տոկոս՝ նախորդ տարուան համեմատ նուազելով 2,5 տոկոսային կէտով: 2021 թ. համեմատ զգալիօրէն փոխուած է պակասուրդի ֆինանսաւորման աղբիւրներու կառուցուածքը:

Յովհաննիսեան չի նշեց, որ 2022-ի Ապրիլ ամիսէն դէպի ՀՀ մարդոց ներհոսքի, զբօսաշրջութեան զգալի աւելացման եւ տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտի ընկերութիւններու Հայաստան տեղափոխուելու պատճառով տնտեսական աշխուժութեան աճի կշիռը կտրուկ աւելցած են, յատկապէս՝ ծառայութիւններու ոլորտին մէջ: Որպէս արդիւնք՝ 2022 թուականին արձանագրուած է 12,6 տոկոս տնտեսական աճ:

«Եթէ 2021-ին պակասուրդը զգալիօրէն՝ 68,4 տոկոսով ֆինանսաւորուել էր արտաքին աղբիւրներից՝ պայմանաւորուած արտարժուութային պետական պարտք-ՀՆԱ յարաբերակցութիւնը հակասորէն նուազել է՝ կազմելով 46,7 տոկոս՝ կանխատեսուած 60,2 տոկոսի փոխարէն, 2021-ի համեմատ նուազելով 13,6 տոկոսային կէտով: Կառավարութեան պարտքը 2022 թ. Դեկտեմբերի 31-ի դրութեամբ կազմել է 3 թրիլիոն 969 միլիարդ դրամ կամ 10 միլիարդ 86 միլիոն տոլար: Ընդ որում կառավարութեան արտաքին պարտքը նուազել է ե՛ւ դրամային, ե՛ւ տոլարային արտայայտութեամբ», եզրափակեց նախարարը:

«Նախորդ տարուայ համեմատ պետական պիւլտէի ե՛ւ եկամուտներում, ե՛ւ ծախսերում արձանագրուել է աճ: Մասնաւորապէս եկամուտներն աճել են 22,5 տոկոսով կամ 379,3 միլիարդ դրամով: Ծախսերն աճել են 11,9 տոկոսով կամ 238,3 միլիարդ դրամով: 2022 թ. պետական պիւլտէն են մոտազրուել շուրջ 1 թրիլիոն 926 միլիարդ դրամ հարկային եկամուտներ եւ պետական տուրքեր, որոնք 104,4 տոկոսով ապահովել են օրէնքով հաստատուած ցուցանիշը», ըսաւ նախարարը: 2021 թուականի համեմատ գրեթէ բոլոր հարկատեսակներու

Բոլոր Անոնք, Որոնք Պատասխանատու Են Հոկտեմբեր 27-ին Համար, Պիտի Դատուին. Յակոբ Արշակեան

«Բոլոր նրանք, ովքեր պատասխանատու են Հոկտեմբերի 27-ին ՀՀ-ն գլխատելու համար, դատուելու են: Բոլոր նրանք, ովքեր հրամայեցին կազմակերպել Մարտի 1-ին Երեւանի փողոցներում ՀՀ քաղաքացիների գնդակահարումը, դատուելու են: Բոլոր նրանք, ովքեր թուլացրել են հայկական բանակը՝ ուտելով զինուորի հացը, գնել են ժամկետանց հրթիռներ, քրէական բարքեր են մտցրել հայկական բանակ, պետական մրցույթներում իրենց խնամի-բարեկամների միջոցով թալանել են, ունեզրկել են, տիրացել են ՀՀ քաղաքացու ունեցուածքին, դատուելու են ու դատուել են եւ չեն մարսելու այդ գողացածը», Ազգային ժողովի յայտարարութիւններու ժամին յայտարարեց Աժ փոխնախագահ Յակոբ Արշակեանը:



Ազգային ժողովի փոխնախագահ Յակոբ Արշակեան

Ան նշեց, որ իրաւապահ մարմինները պիտի որոշեն, թէ ընդդիմութեան որ անդամները թախտուած են այս բոլորին մէջ:

«Այդ թուում նաեւ նրանք, որոնց անունները ձեր գործընկերն աչտեղից հնչեցրեց: Այո՛, հատիկ-հատիկ բոլորի հետեւից պիտի գնան, եւ նրանք պատասխանատուութիւն պիտի կրեն»:

Աշխատանքներ Կը Տանին Որոշ Հատուածներու Մէջ Հակառակորդին Նկատմամբ Առաւելութիւն Ստանալու Համար. Գլխաւոր Շտաբի Պետ

Հայաստանի Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետ Էտուարտ Ասրեանը իրավիճակը հայտարարեց՝ նախապէս անհրաժեշտ է զնահատէ յարաբերական կայուն, թէեւ կը նկատէ, որ Սիւնիքի եւ Գեղարքունիքի ուղղութիւններով հակառակորդին կողմէ գինադադարի խախտումներ կ'արձանագրուին:



Հայաստանի Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետ Էտուարտ Ասրեան

«Զինադադարի խախտումների նպատակը իրավիճակը միշտ լարուած պահելն է, սակայն իրավիճակը մեր հսկողութեան տակ է», ըսաւ ան:

մասին՝ Էտուարտ Ասրեանը նշեց, որ Տեղի ուղղութեամբ ՀՀ զինուած ուժերը հակառակորդին հետ արդէն իսկ կը գտնուին շփման պայմաններում մէջ, ունին նաեւ ստեղծած առաջնագիծ, դիրքային համակարգը կը կատարելագործեն: «Օր-օրի իրականացնում ենք համապատասխան աշխատանքներ որոշ ուղղութիւններում հակառակորդի նկատմամբ նաեւ առաւելութիւն ստանալու ուղղութեամբ: Միւս հատուածներում զինուած ուժերը իրենց առջեւ դրուած խնդիրները կատարում են», ըսաւ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետը:

Անդրադառնալով ԵՄ դիտորդներուն հետ համագործակցութեան մասին հարցումին՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետը նշեց, որ բարձր կը գնահատէ անոնց հետ համագործակցութիւնը, բոլոր յառաջացած հարցերը կը լուծուին պատշաճ մակարդակով: «Մենք առաջին հերթին ստանձնում ենք նրանց ռազմական անվտանգութեան ապահովումը, ինչպէս տեղանքում աշխատելու, այնպէս էլ երթեկեկութիւնների ժամանակ: Նաեւ մեր առջեւ դրուած միւս հարցերի շուրջ փոխգործակցում ենք, համագործակցութիւնը գնահատում եմ բարձր: Ես նաեւ կարող եմ ասել, որ իրենք իրենց առջեւ դրուած խնդիրը կատարում են», ընդգծեց Ասրեան:

Խօսելով Տեղ գիւղի հատուածին մէջ ստեղծուած իրավիճակին

ՀՀ Կառավարութիւնը 3,5 Միլիարդ Դրամի Միջպետական Վարկ Յատկացուց Արցախի Ընկերային Կարիքներուն Համար

ՀՀ Կառավարութիւնը որոշեց փոփոխութիւն կատարել 2023 թուականի պիւլտէի մասին օրէնքին մէջ եւ Լեւոնային Ղարաբաղի կառավարութեան միջպետական վարկ տրամադրել:

Ներկայացուող նախագիծին նպատակը յետպատերազմեան ժամանակահատուածին Լեւոնային Ղարաբաղի տարածքին ստեղծուած ընկերային լարուածութիւնը մեղմելու համար յաւելեալ ֆինանսաւորում տրամադրելն է:

Նախագիծով կը նախատեսուի ՀՀ 2023 թուականի պետական պիւլտէի հարկային եկամուտներէն տրամադրել միջպետական վարկ Լեւոնային Ղարաբաղին 3,5 միլիարդ դրամի չափով՝ յետպատերազմեան ժամանակահատուածին Լեւոնային Ղարաբաղի տարածքին ստեղծուած ընկերային լարուածութիւնը մեղմելուն ուղղուած յաւելեալ ֆինանսաւորման համար, կ'ըսուի որոշման մէջ:

ԼՈՒՐԵՐ

Բացի Ռուսաստանէն՝ Ռեւէ Մէկը Լաչինի Միջանցքին Պէտք Չէ Վերահսկողութիւն Իրականացնէ. Փաշինեան

«Ռուս խաղաղապահ զօրախումբը պէտք է վերահսկողութեան տակ պահի Լաչինի միջանցքը եւ այսպիսով ապահովի միջանցքի բնականոն գործունէութիւնը: Այսինքն՝ բացի ՌԴ-ից, որեւէ մէկը Լաչինի միջանցքում չպէտք է վերահսկողութիւն իրականացնի, Ատրպէյճանն էլ չպէտք է խոչընդոտի Լաչինի միջանցքով ազատ երթեւեկութեանը», կառավարութեան հերթական նիստին յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ նշելով, որ այսպիսի յստակ եզրահանգում կատարուած է Լաչինի միջանցքին Ատրպէյճանի կողմէ հսկիչ-անցագրային կէտի տեղադրումէն, եւ յաւելեց, որ այս նախատեսուած է 2020թ. եռակողմ յայտարարութեամբ:



Վարչապետ Նիկոլ Փաշինեան

րութեան հետագայ լարում թոյլ չտալու եւ համապարփակ կարգաւորման հասնելու համար», ըստ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Ինչպէս ընդգծեց վարչապետը, Հայաստանը պիտի շարունակէ այս ուղղութեամբ բոլոր հնարաւոր ջանքերու գործադրումը. «Բայց այդ ջանքերի հետ ամէն օր աւելի ու աւելի է անհրաժեշտ դառնում ԼՂ-ում ու Լաչինի միջանցքում աւելի լայն միջազգային ներկայութիւնը: Ատրպէյճանի ջանքերը՝ ԼՂ-ն վերածելու հայութեան նոր կառափնարանի, պէտք է կասեցուեն, եւ սրա միակ յուսալի ճանապարհը միջազգային լայն մաստափ կրող ներկայացուցիչների ներկայութիւնն է ԼՂ-ում: Որպէս առաջին քայլ անհրաժեշտ է Լաչինի միջանցք եւ ԼՂ միջազգային փաստահաւաք առաքելութեան հրատապ գործուղումը»:

Վարչապետին խօսքով՝ ԼՂ հայութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը պէտք է դառնան Ստեփանակերտի ու Պաքուի միջեւ բանակցութիւններու առարկայ միջազգային ձեւաչափի շրջանակներուն մէջ:

«Ինչ վերաբերում է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ հնարաւոր խաղաղութեան պայմանագրին, ահնայատ է, որ այն պէտք է ունենայ իրագործման երաշխիքների եւ վէճերի լուծման մեխանիզմների հասկանալի եւ գործուն համակարգ: Յստակ պէտք է արձանագրուած լինեն սահմանների սահմանազատման յարաչափերը եւ պէտք է ներդրուեն որեւէ մագլցումի բացառման յստակ մեխանիզմներ», նշեց Նիկոլ Փաշինեան:

«Մեզնից եւ միջազգային հանրութիւնից պահանջուած է յստակ եւ անկեղծ իրական ջանքեր իրադարձել»:

Ատրպէյճանցիները Տեղադրուած Անցակետին Վրայ Արցախցիներուն Ստիպած Են Կատարել Իրենց Պահանջները



Ատրպէյճանցի սահմանապահը կը ստուգէ Հայ ճամբորդի անցագիրը

Արցախի պետական նախարար Գուրգէն Ներսիսեան տեղեկացուցած է, որ Արցախ-Հայաստան սահմանագիծին Ապրիլ 23-էն ապօրինի անցակէտ տեղակայելու պատճառով, լիակատար ու երկկողմանի շրջափակման մէջ գտնուող գիւղերու բնակիչներու հրատապ մարդասիրական խնդիրները լուծելու համար խումբ մը բնակիչներ դիմած են այնտեղ ծառայութիւն իրականացնող ռուս խաղաղապահներուն, որոնց կողմէ թոյլատրուած է առանց գննութեան մասնաւոր ինքնաշարժներով անցնիլ Հաքարիի կամուրջին մօտ տեղադրուած անցակէտով՝ նախապէս հաւաստիացնելով, որ ատրպէյճանցի-

ներու կողմէ որեւէ հսկողական միջամտութիւն պիտի չըլլայ:

«Մեր քաղաքացիները խաղաղապահների աջակցութեամբ միակողմանի ու անխափան կերպով անցել են ճանապարհը, սակայն անցակէտի տեղադրման պատճառով Գորիսում մնացած հայրենակիցների հետ իրենց բնակավայր վերադարձի ճանապարհին անցակէտում նրանք հանդիպել են ատրպէյճանցիների: Վերջիններս, մեր քաղաքացիներին դնելով անելանելի վիճակում, ստիպել են կատարել իրենց պահանջները, տեսակարահանել այդ գործընթացը», ըսուած է Արցախի պետական նախարարի գրասենյակի մէջ:

Փարիզ Անընդունելի Կը Համարէ Ատրպէյճանի Կողմէ Լաչինի Միջանցքով Տեղաշարժի Խոչընդոտումը. Քաթրին Քոլոնա



Ֆրանսայի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարները միատեղ մամուլի ասուլիսի ընթացքին

«Ֆրանսան իր լիակատար աջակցութիւնը կը ցուցաբերէ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւններուն Եւրոմիութեան ու Միացեալ Նահանգներու գործընկերներու կողքին», Երեւանի մէջ Հայաստանցի իր պաշտօնակիցին հետ համատեղ ասուլիսին յայտնեց Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Քաթրին Քոլոնան: «Բոլորս գիտենք, որ խաղաղութեան ճանապարհը դժուարին է, դժուար է գտնել, նաեւ չաճախ երկար, բայց ես կ'ըսեմ Երեւանի մէջ, ինչպէս ըսած եմ Պաքուի մէջ՝ այդ միակ ճանապարհն է, որ հնարաւորութիւն պիտի տայ արդար եւ կայուն խաղաղութեան հասնելու, միակ ճանապարհը, որ հնարաւորութիւն պիտի տայ նոր հեռանկարներ ստեղծելու երկու երկիրներու ապագային եւ երկու երկիրներու բնակչութիւններուն համար: Ուստի մենք բոլորին կը քաջալերենք վճռականօրէն այդ ճանապարհի վրայ կանգնիլ, պարոն նախարար՝ ձեր բարեկամներուն օգնութեամբ: Արդար եւ կայուն խաղաղութիւն: Ի՞նչ կը նշանակէ այս: Նախեւառաջ խաղաղութիւն, որ հիմնուած է միջազգային իրաւունքի յարգանքի վրայ»:

Փարիզ անընդունելի կը համարէ Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքով տեղաշարժի խոչընդոտումը եւ կը յայտարարէ, որ դա Լեռնային Ղարաբաղի բնակչու-

թեան համար յղի է տնտեսական եւ մարդասիրական ճգնաժամի լուրջ վտանգներով: Ըստ Քոլոնայի, նման գործեւորութիւնը նաեւ կը խոչընդոտէ Հայաստանի հետ խաղաղ բանակցութիւնները. «Եւ մենք կը շարունակենք կոչ ընել վերականգնելու անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով՝ համաձայն ձեր կողմէ ստանձնած պարտաւորութիւններուն, բայց նաեւ համաձայն Միջազգային Արդարադատութեան Դատարանի վճիռին: Այդ արգելափակումը արդէն քանի մը ամիս կը տեւէ, այդ ընդունելի չէ եւ չի համապատասխաներ միջազգային իրաւունքի յանձնառութիւններուն, եւ բացի անկէ, մարդասիրական ճգնաժամի վտանգ կը ստեղծէ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան համար»:

«Լաչինի միջանցքում անցակէտ տեղադրելը Նոյեմբերի 9-ի յայտարարութեան հերթական, սակայն հետեւանքների առումով չափազանց վտանգաւոր խախտում է», - իր հերթին յայտնեց Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը. ««դրա եւ Լեռնային Ղարաբաղը լքելուն ուղղուած Ատրպէյճանի իշխանութիւնների արդէն բացայայտ կոչերի, ատելութեան խօսքի հետեւում հնարաւոր չէ չտեսնել Լեռնային Ղարաբաղում ցեղային զտումների իրականացման իրական սպառնալիքը»:

Պաքուն Կը Պնդէ, Որ «Հայ Հոգեւորականները Պէտք Է Հեռանան Դադիվանքէն»

Ատրպէյճանի մէջ կրօնական կազմակերպութիւններու հարցերով պետական կոմիտէի նախագահ Մուսաբիգ Կուրպանլին ըսած է, որ «հայ հոգեւորականները պէտք է հեռանան» Դադիվանքէն:

Անոր խօսքերով՝ «հայերը որեւէ կապ չունին այդ վանական համալիրին հետ»: «Այն կը պատկանի կովկասցի ալպանացիներուն, եւ վաղ թէ ուշ անոր կառավարումը պիտի իրականացուի ալպանա-ուսուկական կրօնական համայնքին կողմէ», ըսած է կրօնական հարցերով պետական կոմիտէի ղեկավարը: Ատրպէյճանցիները Քելբաջա-



րի շրջանին մէջ գտնուող հայկական հինաւուրց Դադիվանքը իր տարածքէն կը կոչեն: 44-օրեայ պատերազմէն յետոյ այն կը գտնուի ռուս-խաղաղապահներու վերահսկողութեան ներքոյ:

Հայկական Krisp-ը Ներկայացուած Է Նիւ Եորքի Թայմզ Զրատարակին Վրայ



Աշխարհի մէջ երկրորդ ամենամեծ ֆոնտային պորտան՝ NASDAQ-ը, Նիւ Եորքի հանրապետութեան Ֆրանչիզայի հրատարակին վրայ ներկայացուցած է հայկական Krisp-ը:

«Այսօր իւրապատուկ օր է Քրիստի համար: Նիւ Եորքի Թայմզի հրատարակին վրայ նաստաքը ներկայացուց Քրիստի: Գերդրական զգացողութիւններ եւ մեծ ոգեւորուածութիւն աւելին ստեղծելու, եւ վստահ եմ, որ Քրիստի

հնարաւորութիւն ունենայ Նաստաքի մէջ հրատարակային թողարկում (IPO) ընելու», այս մասին իր ֆէյսպուքեան էջով գրած է Krisp-ի համահիմնադիր Արտավազ Մինասեանը:

Krisp-ը արհեստական բանականութեան արհեստագիտութիւններու միջոցով իրական ժամանակին մէջ առցանց հանդիպումներու ժամանակ կը մաքրէ ձայնը կողմնակի աղմուկէ՝ ապահովելով պարզ եւ արհեստավարժ հանդիպումներ:

Համագործակցութիւն ՀՀ Քննչական Կոմիտէին Եւ «TikTok» Ընկերային Ցանցին Միջեւ



ՀՀ Քննչական Կոմիտէն եւ «TikTok» ընկերութիւնը համագործակցութեան շուրջ պայմանաւորուածութիւն ձեռք բերած են:

Մասնաւորապէս ՀՀ Քննչական Կոմիտէի եւ «TikTok» ընկերութեան միջեւ ձեռք բերուած է համաձայնութիւն ընկերութեան հարթակին վրայ ծանր եւ առանձնապէս ծանր յանցագործութիւններու վերաբերեալ տեղեկատուութեան հրատարակման պարագաներուն արագ արձագանգման եւ անհարձեշտ տեղեկատուութեան հրատարակման մեխանիզմներու գործարկման վերաբերեալ՝ լիարժէք պահպանելով օրէնսդրութեան պահանջները:

Նշուած համագործակցութիւնը պիտի նպաստէ առցանց ընկերային հարթակի շրջանակներուն մէջ յանցագործութիւնները կանխելու եւ կանխարգելելու, յանցագործութեան հնարաւոր դրսեւորումներու արձագանգումը բարձրացնելու եւ բացայայտելու:

Միրգոյեան-Պայրամով Հանդիպում

Շարունակուած էջ 1-էն

Ատրպէյճանական կողմը իր տարածած հաղորդագրութեան մէջ միայն նշած է, որ քննարկուած են անվտանգութեան իրավիճակին, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման վերաբերող հարցեր:

Քրեմլինի Արձագանգը Ռուսիոյ նախագահի մամուլի

խօսնակ Տմիթրի Փեսքով ըսած է, որ դարաբաղեան կարգաւորման համար, Ռուսիոյ, Ատրպէյճանի եւ Հայաստանի առաջնորդներու եռակողմ համաձայնութիւններէն բացի, ուրիշ իրաւական հիմքեր չկան:

Անոր խօսքով՝ Պաքուի եւ Երեւանի միջեւ իրավիճակի կարգաւորման օգնութիւնը կարելի է ողջունել, բայց միայն վերոյիշեալ համաձայնութիւններու հիման վրայ:

Ֆրանչիսկո Պապը Գրիգոր Նարեկացին Անուանած Է Համերաշխութեան Թարգման

Ապրիլ 26-ին, Վատիկանի Ս. Պետրոս հրատարակին վրայ կաշաքած աւանդական գլխաւոր ունկնդրութեան ընթացքին Ֆրանչիսկո Պապը մասնաւորապէս անդրադարձած է Գրիգոր Նարեկացիին՝ զայն անուանելով համընդհանուր համերաշխութեան թարգման:

Խօսելով «Մատեան Ողբերգութեան» աղօթքներու ժողովածուին մասին Ֆրանչիսկո Պապը ըսած է, որ «Սուրբ Գրիգոր Նարեկացին հայ վանական էր, որ մեզի թողեց աղօթքի գիրք, որուն մէջ ձուլուեցաւ հայ ազգին՝ քրիստոնէութիւնը ողջագործող առաջին ժողովուրդին հաւատքը...»: «Գրիգոր Նարեկացին համաշխարհային, համընդհանուր սիրոյ՝ որուն կոչուած են բոլոր քրիստոնեաները, փայլուն օրինակ է»: Նորին Սրբութիւնը նաեւ նշած է, որ հայ վանականը իր ամբողջ կեանքը ապրեցաւ Նարեկի վանքին մէջ, ուր ան «սորվեցաւ ուշադրութեամբ զննել մարդկային հոգիին խորքը եւ, աղօթքն ու բանաստեղծութիւնը միաձուլելով, նշանաւորեց թէ՛ հայ գրականութեան եւ թէ՛ հայ հոգեւոր ժառանգութեան գազաթնակէտը»:

Հայ սուրբին մասին Հռոմի Պապին խօսքը արտացոլուած է «Վատիկան Նիւզ»-ի գրեթէ չորս տասնեակ լեզուներով, այդ շարքին արեւմտահայերէնով, անգլերէնով, ֆրանսերէնով, փորթուկալերէնով,



Հռոմի Ֆրանչիսկո Պապը

ուսերէնով:

Ինչպէս յայտնի է, 2015թ. Ապրիլ 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարին մէջ, Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած պատարագի ընթացքին Հռոմի քահանայապետը հայ միջնադարեան հոգեւորականաստուածաբանը հռչակեց Տիեզերական եկեղեցւոյ վարդապետ, իսկ 2021թ. Փետրուար 2-ին Ֆրանչիսկո Պապի հրամանագրով Հռոմէական գլխաւոր օրացոյցին մէջ Փետրուար 27-ը ներառուեցաւ որպէս Սուրբ Գրիգոր Նարեկացիի յիշատակի օր:

Որեւէ Բացատրութիւն Զի Տուիր, Թէ Ինչու Թուրքիոյ Օդային Տարածքը Փակուած Է «Flyone Armenia»-ին Համար



Հայաստանեան արձանագրութիւն ունեցող «Flyone Armenia» ընկերութիւնը տեղեկացած է, որ չի կրնար օգտագործել Թուրքիոյ օդային տարածքը տարանցիկ թռիչքներ իրականացնելու համար: Թրքական օդային փոխադրութեան իշխանութիւնները առայժմ որեւէ բացատրութիւն ընկերութեան չեն տուած պատճառներուն մասին:

«Մեր որոշակի չուերթներ դէպի Եւրոպա, որոնք տարանցուած էին Թուրքիայի օդային տարածքում, առժամանակ չեն կարող իրականացուել Թուրքիայի օդային տարածքի կիրառութեամբ: Պատճառների մասին մենք տեղեկատուութիւն չունենք: Ամէն դէպքում վստահ ենք, որ մեր կողմից, օդանաւային ընկերութեան կողմից նախապէս ստացուել էին բոլոր թոյլտուութիւնները չուերթները իրականացնելու 2023 թուականի ամառային թռիչքային շրջանում,

եւ որեւէ օդային փոխադրութեան գործունէութեան հետ կապուած պատճառ մենք չենք տեսնում էդ կասեցման հետ կապուած», փոխանցեց օդանաւային ընկերութեան խորհուրդի նախագահ Արամ Անանեանը:

Ան նաեւ տեղեկացուց, որ եւրոպացի գործընկերներու հետ համագործակցութեամբ թռիչքները պիտի իրականացուին, եւ տոմսեր զնած ուղեւորները տհաճ փաստի առջեւ պիտի կանգնի, սակայն փաստացի այս պահուն հայկական արձանագրութեամբ ընկերութիւնը չի կրնար օգտագործել Թուրքիոյ օդային տարածքը:

Անցեալ տարուէն այս օդանաւային ընկերութիւնը կ'իրականացնէ նաեւ Երեւան-Սթամպուլ-Երեւան թռիչքներ, իսկ թրքական «Փեկասուս»-ը թռիչքներ ունի Սթամպուլ-Երեւան-Սթամպուլ ուղղութեամբ:

Թուրք Պատմաբան Փրոֆ. Եաշար Քորայ

Շարունակուած էջ 1-էն

թը, MassisPost-ը եւ ՄԴ-ՀԿ Արխիւը: Ապա, մէկ վայրկեան լուսթեամբ յարգուեցաւ Հայոց ցեղասպանութեան նահատակներու յիշատակը: Այնուհետեւ ան հրաւիրեց օրուան հանդիսավար՝ Մասիս հրատարակչականի խորհուրդի անդամ՝ Գրիգոր Մոլոյեանը, որ հակիրճ կերպով ներկայացուց դասախօսի կենսագրական գիծերը:

Իր ելոյթի սկզբնաւորութեան Դոկտ. Քորայ իր ուրախութիւնը յայտնեց, որ առաջին անգամ կենդանի աչքով կը տեսնէ ՄԴ-ՀԿ դրօշը, որուն մինչ այդ ծանօթ էր

փաստարկներուն՝ ի տարբերութիւն այլ քաղաքական գաղափարախօսութիւններուն եւ կուսակցութիւններուն, որոնց շարքին՝ Դոկտոր Քորայ շեշտեց, որ ամսագիրը շարունակած է կենդրոնանալ իր երկու հիմնական քաղաքական սկզբունքներուն վրայ՝ հայ համայնքի պահպանման եւ դեմոկրատական ??եւ սահմանադրական բարեփոխումներու ուղղութեամբ պայքարին վրայ:

Դասախօսութեան յաջորդեց Դոկտոր Քորայի հետ հարցուպատասխանը, որ վարեց իրաւաբան Գրիգոր Մոլոյեան: Այս բաժինով



Իրաւաբան Գրիգոր Մոլոյեան կը վարէ Փրոֆ. Եաշար Քորայի հետ հարց ու պատասխանի բաժինը

միայն նեկարներով: Ան իր ելոյթին մէջ ծանրացաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Պոլսոյ ուսանողական միութեան «Կայծ» պարբերականի եւ կուսակցութեան այլ հրատարակութիւններուն վրայ, որոնց էջերով շեշտը կը դրուէր գիտական ??սոցիալիզմի վրայ:

Դոկտոր Քորայ քննարկեց ամսագրի էջերուն տարբեր տեսական եւ գործնական կարծիքներն ու հակափաստարկները եւ անոնց ազդեցութիւնը Օսմանեան կայսրութեան տարածքին սոցիալիստական շարժման վրայ:

Խօսելով ՄԴ-ՀԿ-ի դիրքորոշումներուն մասին ան ընդգծեց կուսակցութեան մասնակցութիւնը բանուորական եւ հակապատերազմական շարժումներուն եւ ներգրաւուածութիւնը՝ դասակարգային հարցերուն եւ կանանց ընտրելու իրաւունքներու պաշտպանութեան աջակցելու հարցերուն մէջ:

«Կայծ» ամսագրի էջերով ընթերցողները ծանօթացած են ՄԴ-ՀԿ-ի կողմէ մանրակրկիտ մշակուած

թուրք պատմաբանը տեղեկութիւններ տուաւ ՄԴ-ՀԿ-ի բանուորական շարժումներուն մասնակցութեան եւ Օսմանեան կայսրութեան մէջ հայերու պատմութեան ուսումնասիրութիւնը իրականացնելու իր փորձին մասին:

«Մենք երախտապարտ ենք դոկտոր Քորային, որ կ'ուսումնասիրէ ՄԴ-ՀԿ-ի ունեցած պատմական ազդեցութիւնը ժամանակաշրջանի աշխատաւորական եւ սոցիալիստական ??շարժումներուն վրայ եւ այդ բոլորը բացայայտելու ուղղութեամբ կը տանի հետազոտութեաններ: Նաեւ շնորհակալութիւն կը յայտնեք իր բացայայտումները մեր ամերիկահայ համայնքին ներկայացնելուն համար», - երեկոյի աւարտին ըսաւ Գրիգոր Մոլոյեան:

Դոկտոր Քորայ ունի բազմաթիւ հրատարակումներ, որոնց շարքին՝ հայերու աշխատանքային պատմութեան, Օսմանեան բանակէն ներս հայ զինուորներու ներկայութեան եւ հայկական սոցիալիստական հրատարակութիւններու մասին:

Պտղատու Այգում Կանգնած

Շարունակուած էջ 2-էն

խագահին հասցէագրուած «լիկբեզ», մասնաւորապէս այն մասին, թէ ինչ է գրուած Նոյեմբերի 9-ի յայտարարութեան մէջ, որ կէտն ինչ է նշանակում, ինչ է բովանդակում կամ ոչ եւ Ատրպէյճանն իր հերթական գործողութեամբ յայտարարութեան որ կէտն է խախտում:

Թուում էր՝ խաղաղապահների՝ Արցախում գտնուելու իրաւական հիմքի՝ Նոյեմբերի 9-ի յայտարարութեան մոդերատորը՝ ՌԴ նա-

խագահ Փութինը, նախանձախնդրութիւն կը ցուցաբերի եւ կը չէզոքացնի այն «ՉէՊե»-ները, որոնք պարբերաբար թույլ է տալիս Ատրպէյճանը եւ դա թանկ է նստում ուսական զօրակազմի, նոյն է թէ՛ իր հեղինակութեան վրայ, մինչդեռ անցած երկուսուկէս տարիների ընթացքն այլ բանի մասին է վկայում:

Կեղծ է այն քարոզչական նարատիւը, թէ Ատրպէյճանը նպատակաւորաբար հեղինակագրուած է ուսական խաղաղապահութիւնը՝ օգտուելով այն հանգամանքից, որ

Ինչ Սպասել Ուաշինգթոնեան Բանակցութիւններէն

Շարունակուած էջ 1-էն

փորձ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները բերել խաղաղ բանակցութիւններու դաշտ, սակայն Ատրպէյճանի հեռու տանող ծրագիրները խոչընդոտ կը հանդիսանան սահմանադրի իրագործման:

Մինչեւ այն ատեն, երբ Միացեալ Նահանգներն ու նաեւ Եւրոպան կը բաւարարուին քաղաքական յայտարարութիւններով ու կոչերով եւ պատրաստ չեն առնելու գործնական քայլեր՝ ինչպէս պատժամիջոցներ սահմանելով եւ կամ առնուազն պատժամիջոցներու մասին սպառնալիք հնչեցնելով, դժուար թէ Պաքուն ետ կանգնի իր նպատակներուն հասնելու համար ռազմական միջոցներու

դիմելու իր վարքագիծէն:

Ինչպէս բազմիցս ըսուած է եւ որուն նաեւ համոզուած են Հայաստանի իշխանութիւնները, սման հանդիպումները պիտի սման ապարդիւն միջեւ որ, ռազմական գետնի վրայ հաստատուի որոշ հաւասարակշռութիւն Ատրպէյճանի հետ, Որմէ ետք միայն կարելի պիտի ըլլայ Պաքուին պարտադրել յարգելու՝ բանակցութիւններու ընթացքին գոյացած համաձայնութիւնները:

Ուաշինգթոնեան բանակցութիւնները, ի տարբերութիւն անցեալին, արդեօք կրնան բեկումնային ըլլալ: Այս հարցի պատասխանը յայտնի կը դառնայ շատ մօտ ապագային:

Գ.ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

ՌԴ-ի «գլուխը խառն է» ու քրանական պատերազմով: Պարզապէս ՌԴ-ի համար (որպէս ՀՀ ռազմավարական դաշնակցի եւ «44-օրեայ պատերազմը կանգնեցրածի») սեփական հեղինակութիւնն աւելի ստորադաս է, քան այն միջնաժամկէտ շահը, որը վերջինս կարող է սպասարկել Ատրպէյճանի բռնակալի հետ գործարքի գնալով: Հեղինակութիւն, որի մասին, նկատենք, աշխարհում վաղուց արդէն եւ մասնաւորապէս ու քրանական պատերազմից յետոյ անցեալ ժամանակով են խօսում:

Ի դէպ, ուսական խոստումները, դրանց հեղինակների հեղինակութեան մասին վկայող երկու փաստ վկայաբերենք. ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովն ու ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան Լաչինի միջանցքի փակուելուց յետոյ քանիցս յայտարարել են, որ բանակցութիւններ են ընթանում ատրպէյճան-

նական կողմի հետ միջանցքը բացելու ուղղութեամբ, անգամ ժամկէտ էին նշում՝ «առաջիկայում», «մօտ ժամանակներս»:

Թէ ի՞նչ ժամանակացոյցով է առաջնորդում ուսական դիւանագիտութիւնը «մօտ ժամանակներս» ժամկէտ նշելիս, ասել չենք կարող: Փաստ է, որ միջանցքը մինչեւ այժմ փակ է, իսկ ուսական կողմը այն բացելու հարցում որդեգրել է «մոժետ զատրա, ա մոժետ» պոսլե զավտրա» տրամաբանութիւնը:

Նոյն Սերգեյ Լավրովը Լաչինի միջանցքում անցակէտի տեղադրումը բացառող յայտարարութիւն արեց մասնաւորապէս երկու ամիս առաջ Պաքուում, սակայն անցակէտն այսօր ոչ միայն իրականութիւն է, այլեւ դրա երկու կողմերում ծածանուում են ուսական եւ ատրպէյճանական դրօշները:

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի Մայիս 15, 2023-ին Երեկոյան 6իշո ժամը 8-ին
Սողանալեան սրահին մէջ Փասատեան:
Հասցէ՝
1060 N. Allen Avenue Pasadena CA 91104

Շնորհահանդես «Անսըրլեան Գերդաստան» Գրքի՝ Յեղիճակ՝ Պետրոս Անսըրլեան

«...Բացատրենք Եւ Պատմենք Մեր Տոհմին Պատմութիւնը Մեր Երեխաներուն Եւ Թոռներուն»



ԿԱՐԻՆԵ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ

Գինեձձան տեղի ունեցաւ Սրբոց Ղեկնողեանց Մայր տաճարում, Հինգշաբթի, 20 Ապրիլ 2023-ին, հովանավորութեամբ Յովնան սրբազանի եւ մի շարք կազմակերպութիւններ:

Հեղինակ Պետրոս Անսըրլեանը ներկայացնում էր իր սեփական կեանքի եւ իր գերդաստանի պատմութիւնը: Օրուայ հանդիսավարն էր փաստաբան Ռուբէն Աւարեանը, գիրքը ներկայացնում էր եւս: «Նոր վերնատուն» կազմակերպութեան կողմից ելույթ ունեցաւ տօթ. Թաշճեանը: Դաշնամուրի նուագով ելույթ ունեցաւ Սոփիա Սարգսեանը: Իր խօսքը ասաց հեղինակը: Երեկոն ավարտուեց սրբազան հօր պահպանիչով:

Կարող ենք այս վերջակէտից յետոյ չշարունակել՝ ավարտուած համարելով հարգազրուութիւնը, կամ էլ պիտի սկսենք մանրամասնել, պատկերել երեկոյի ընթացքը, ծաւալել գրութիւնը: Անընդունելի համարելով առաջին տարբերակը՝ շարունակում ենք:

Սոյն գրքի նախապատրաստական աշխատանքների ժամանակ երբ պատմում էր մի բարեկամի այս մասին, նա համարեալ անտարբերութեամբ ասաց. «Է՛հ, շատ կան ասանկ գիրքեր, Եղեռնէն վերապրածներու պատմութիւններ են, բոլորն ալ իրարու կը նմանին»:

Այժմ ցոյց տանք ա՛յս գրքի իւրայատկութիւնը:

Ընտանիքի անդամները ոչ մի գրաւոր տեղեկութիւն չէին թողել իրենց մասին: Միակ փաստաթուղթը եղել է հայտառութիւնը, որի էջերի վրայ նշուել են անուններ, երեխաների ծննդեան թուականներ: Կային նաեւ չբացատրուած լուսանկարներ, որոնց ինքնութիւնը վերականգնուել է յիշողութեամբ: Դժուար էր ճանապարհ դուրս գալ միայն բանաւոր տուեալներով. պէտք էր արձանագրել իւրաքանչիւր մանրամասնութիւն, հասցնել խօսելու մեծահասակների, ընտանիքին առնչուող անձերի հետ, որ հեղինակը կատարել էր մեծ բժախնդրութեամբ:

Գիրքը սկսում է անգլերէն բաժնով (թարգմանիչ՝ Երուանդ Գոչունեան): Այնուհետեւ մեզ ներկայանում է ընտանեկան ծառի դաստորութեան աղիւսակը անգլերէնով: Յաջորդ բաժինը նուիրուած է գերդաստանի անդամների նկարներին՝ անգլերէն բացատրու-

թիւններով: Եւ վերջապէս եզրափակիչ մասում, Պետրոս Անսըրլեանի կողմից գրուած «Անսըրլեան Գերդաստան» յուշագրութիւն-փաստագրութիւնը կարգում ենք հայերէնով:

«Անսըրլեան Գերդաստան» անգլերէն եւ հայերէն գրքի հիմքում ընկած է լիբանանեան քաղաքական անկաշուն ժամանակների շրջանում Պետրոս Անսըրլեանի առաքելութիւնը Պէյրութի Ամերիկեան դեսպանատան մէջ: Մեր կարծիքով, ոչ թէ պատմութիւնից ենք զալիս դէպի Պետրոսը, այլ Պետրոսից գնում ենք դէպի պատմութիւնը՝ ցոյց տալու համար այն ենթահողը, որ ունէր Անսըրլեան գերդաստանը:

Պետրոսը՝ ընտանեկան պատմութեան բաժնում, մանրամասնօրէն նկարագրում է իր կեանքի ընթացքը. ընտանիքի ավագ որդին, մեծ հօր անունը կրող, ժազի, Ներսէսի եւ քոյր Ազնիւի եղբայրը, ապա՝ ամուսինը Մարիանի, գաւակների ծնունդը, երկուստէք ծնողների հոգատարութիւնը, իր ուսումնառութիւնը դպրոցում, համալսարանական կրթութիւնը, աշխատանքային գործընթացը, Լիբանանի քաղաքացիական պատերազմը, 20 տարիների հիւպատոսական պաշտօնավարութիւնը Ամերիկեան դեսպանատներում՝ Պէյրութ, Աթենք, Կահիրէ, Նիկոսիա եւ Սանաա, առեւանգումը սիրիացի զինուորների կողմից եւ ազատ արձակումը հայ բարեկամի միջոցով: Եւ ապա՝ Ամերիկեան դեսպանատան ջարհաստիկ պայթումը 1983 թուականի Մայիսին: Ութ վիրաբուժական գործողութիւնները արգելք չեղան Պետրոսին՝ դարձեալ շարունակելու աշխատանքը հիւպատոսարանի տարբեր բաժիններում, հիմնականում անցագրային բաժնում: Anser Travel ճամփորդական ընկերութեան հիմնումը եւ վարումը միանաբար Ազնիւի եւ Ներսէսի հետ եւս կարեւոր ներդրում էր Անսըրլեանների կողմից լիբանանահայ գաղութում:

Առանց շարունակուող մանրամասնութիւնների՝ Պետրոսն այժմ այստեղ է, ընդգրկուած է Արեւմտեան թեմի եկեղեցու եւ մի շարք հայկական կազմակերպութիւնների հայանպաստ աշխատանքներում: Ընտանիքի պատմութեան բաժնից մեզ հետաքրքրեցին մի շարք երեւոյթներ, որոնք անկախ իրեն պատկանելուց, ընդհանրական էին այդ ժամանակուայ սերնդին:

Կատարում էր լեզուափոխանակութիւն. «Մեր մեծ մայրերը կը խօսէին թրքերէն, իսկ մենք կը պատասխանէինք հայերէն»:

Քաղաքավար էր երիտասարդ սերունդը. խօսում էին միայն այն ժամանակ, երբ հարց էր տրուած իրենց, այն էլ ցածրաձայն:

Տարաբախտ հայերի զաւակների ուսում ստանալը մի ուրիշ երեւոյթ էր: Պետրոսի հայրը ասում էր, «Թէ վրէժ կը լուծէ՛ մեզ բարձրագոյն վարժարան եւ համալսարան դրկելով»:

1700-ական թուականների սկզբում, Անսըրլեան ծնուած քաղաքապետին, որ որոշ կրթութիւն ունէր եւ քաղաքապետարան էր այցելում, բնակիչները անուանում էին «Անսըրլեան», եւ սկսում է այդ ազգանուն շրջանառութիւնը Տղամարդկանց մեծամասնութիւնը պղնձագործներ էին եւ պղինձ կլայեկողներ (ղալաճի), որ շրջիկ արհեստ էր: Պետրոսը գրում է.


«Իրենց գլուխ գործոցը կրակարաններն էին, կափարիչով, տան մէջտեղը դրուելու, մէկ մեթր բարձրութեամբ, պղնձեայ սարքով, վրան մանր փորագրութիւններով ու զարդարանքներով: Պղնձագրութիւնը գերդաստանի անդամներուն յատուկ վաճառանիշն էր»:

Եղեռնից ազատուած սերունդը գծել էր իր կեանքի ուղեւորութեան քարտէզը՝ Այնթապ, Հալէպ, Պէյրութ, Լոս Անջելես:

Անսըրլեանները մասնակցել են Այնթապի հերոսամարտի կռիւներին, ուր պատրաստուած էին զինամթերքներին անհրաժեշտ մասեր: Նրանք եղել են նաեւ զանազան քաղաքական կուսակցութիւնների անդամներ:

Բռնի տարագրութիւնը քշում է գերդաստանին Հալէպ: Նրանք պղնձագործութեան աշխատատեղիներ են հաստատում Պղնձի շուկայում («Ղազանճը չարշը»)՝ հօրեղբայրներ, եղբայրներ ու զարմիկներ նոյն տեղում:

Սակայն արդէն երեւան էին



զալիս այլ մասնագիտութիւններ գերդաստանի մէջ՝ մանկավարժներ, պետական աշխատաւորներ, ոսկերիչ, բժիշկ, ելեկտրագէտ, մեքենագէտ, նաեւ՝ մասնագէտ երաժիշտներ:

Անսըրլեանների յաջորդ տեղաշարժն էր դէպի Պէյրութ: Պղնձագործութեան արհեստն իր զարգացումներն ունեցաւ այստեղ:

Բարգաւաճելով իրենց գործերը, ունենալով հանգիստ պալամաններ, Անսըրլեանները առիթ են ունենում նաեւ մասնակցելու մարզական ակումբների, ընկերային եւ բարեսիրական միութիւնների կեանքին: Նոր սերունդը ստանում է բարձրագոյն կրթութիւն Լիբանանի համալսարաններում:

Սակայն Լիբանանի քաղաքացիական պատերազմը ընտանիքներին պարտադրեց նոր տեղաշարժերի՝ դէպի Ֆրանսիա, Յունաստան, Իտալիա, Կանադա եւ Միացեալ Նահանգներ:

Պետրոսը գրում է. «Պղնձագործութիւնը՝ ժառանգուած հինգերորդ սերունդին կողմէ, որակով արդիականացած, որ տակաւին գործոն է Անսըրլեան գերդաստանի անդամներուն կողմէ, այս անգամ Պէյրութ, միակը որ կը շարունակէ պահպանել եւ շարունակել ավանդութիւնը մեծ յարգանքով ու համ-

Շար.ը էջ 15

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION



AEBU SCHOLARSHIP PROGRAM

APPLICATIONS NOW OPEN
Through June 30, 2023

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

To apply, visit our website
WWW.AEBU.ORG



EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE


626.344.7321

AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Հարուստ Բառապաշարով Գրողը (Սիրուն Սիսեռեան Հաճեթեան)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Հինգ ամիս առաջ անուշիկ քոյրդ՝ Անժէլը ինձի հասցուց «Կեանքի պատուհանն» գիրքը: Հազիւ քանի մը էջ կարդալէ ետք անդրադարձալ, որ բոլորովին նոր, թարմ մտածողութեամբ առաջնորդուած ես ըսելիքդ, պատմելիքդ նոր գոյնով ներկայացնելու համար ընթերցողներուն: Դուն ես պատմողը եւ գլխաւոր հերոսը: Ամէն ինչ, ամէն գործողութիւն շուրջդ կը դառնայ: Սակայն՝ ինչո՞ւ «Կեանքի պատուհանն» եւ ոչ՝ «Կեանքի՛ս պատուհանն»: Ըստ իս, գիրքիդ անուանումը խոշոր, տիեզերային հասկացողութիւն կ'ենթադրէ: Իսկ դուն «Կեանքի փախչող վայրկեաններու» ընթացքին պիտի անդրադառնայիր, որ աշխատած ատեն «Խոհանոցիդ պատեր կը խաղային տխուր մեղեդիով»՝ քեզ յիշեցնել տալով, որ ամէն մէկ տող, որ դուն գրի կ'առնես՝ դուն ես անոր տէրը: Ըսել է թէ դուն տունիդ պատուհանն է, որ սիրտդ, հոգիդ կը բանաս հայ մարդուն, հայ ընթերցողին առջեւ: Բայց, ըսածս քննադատութեան մի վերագրէր: Պարզապէս ընկալումի հարց է: Ես ըսածիս պէս կը վարուէի:



Յիշողութիւններու գիրք է հատորը, բայց ի տարբերութիւն նման այլ հեղինակներու յուշագրութեանց, դուն հրաշալիօրէն գծած ես 20-դ դարու կէսերուն Սուրիոյ եւ Լիբանանի հայ համայնքներու ծաղկող միջավայրին համայնապատկերը:

Գրեթէ յուրաքանչիւր նախադասութեան մէջ կան բառեր, բառախաղեր, ասոյթ յիշեցնող հաճելի, հաղորդական, մտերմիկ, ջերմ տողեր, որոնցմով կը գմայլիս, կը հիանաս եւ յաճախ ալ աչքերդ կը սկսին ջրակալիլ... («Մօրս «տղան»):

Որոշեցի սովորական դարձած գրախօսականի փոխարէն, գիրքիդ մէջ եղած բառերու, ասոյթներու նմանող նախադասութիւններու ծաղկաքաղ ընել եւ անոնցմով մեկուսի գրոյց մը ընել քեզի հետ:

Խոստովանիմ սիրելի Սիրուն, որ աչքերս տկար տեսնալու պատճառով, քանի մը օրերու ընթացքին հազիւ կըրցայ, աւարտել գիրքդ ընթեցելը: «Գրականութիւնը քեզի առաւ (Սիրունի խոստովանանքն է, - ՀԵՆ. Ա.) իր թեւերուն մէջ, մանաւանդ՝ Ազգայինը, մինչեւ օրս մեր հոգիներուն մէջ հիւծող»:

- Տեսա՞ք, թէ որքան խորերը կ'երթայ մեր Սիրունը: Փիլիսոփայական ընդհանրացումով մը, մէկ նախադասութեամբ տուաւ սփիւռքահայ գրականութեան այսօրուան տխուր պատկերը:

«Կեանքի փախչող վայրկեաններու» ընթացքին Տէրը իր գիրկը առաւ սփիւռքահայ գրողներու, լրագրողներու, մտաւորականներու ամբողջ սերունդ մը, որը ի գին ամէն գոհողութեան, երկար տարիներ ջանաց հայուն Հայ պահել օտար երկիրներու մէջ եւ ամբակուռ կապ ստեղծել Մայր Հայրենիքի հետ:

Տարածուն «գրականութիւնը» թերթն է, ամսագիրը, որոնք հոս, Լոս Անջելէսի մէջ տարիներու թաւալումի ընթացքին գրեթէ ամէնը փոշիացան:

«Աստուած խօսեցնել» տուած է քեզի, նոյնը նաեւ շատ գրողներու, սակայն անոնցմէ ոմանք «Ծանր հայերէն մը ունին իրենց բերնին մէջ»: Հոս արդէն կարծես Պարոնեանը չարութիւն առաւ եւ ըսաւ, - Ականջ մի կախէր անոնց աղջիկս, անոնք «ցամաք մարդ» են եւ միայն «Մայրենիի տոկուն շէնքին» հաւաքարար կրնան ըլլալ միայն: Անոնց «զառամած խօսքերը» «ճղծիմ թիւով» մարդիկ մտիկ կ'ընեն, ան ալ՝ «Ականջի հիւր ըլլալու պարտաւորութեանն զրդուած»: Քոյրս իրաւունք ունիս ըսելու, որ «ցամաք մարդ»-իկ «Կեանքին վրիպած անձեր են»:

Դուն, սիրելի Սիրուն, «Միտքի աչքերով միտքերու պատերազմ» կը մղես «կտոր մը հայերու» դեմ, վազ անցիր, իմաստ չունի աշխատանք տանիլ անոնց ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՀԱՅԻ վերածելու համար:

Այդ «կտոր մը հայերու» պատճառով է, որ մեր հայրենիքը այսօր կորստեան վտանգի տակ է: Եղած «Ազնուական գլուխներն» ալ ի գորու չեն անոնց հախէն գալ: Անոնք, ի ցոյց աշխարհի, Պետական Ազգային Ժողովը վերածած են փողոցային կռիւներու, հայհուակութիւն եւ պոռչուութիւն թատերաբեմի:

Սիրելիս, քեզի բան մը ըսե՞մ: Դուն հիանալի բանաստեղծ կրնայիր ըլլալ, որովհետեւ հիմնականին մէջ, դուն կը մտածես չափածոյի ոճով, բայց ըսելիքդ թուղթի կը յանձնես արձակի տեսքով:

- Ո՞վ ԳԻՏԷ ԳՆԱՅՔԸ ԿԵԱՆՔԻՆ, - ինչո՞վ բանաստեղծական տող չէ: Մէկ նախադասութիւն եւս, - ԱՆՈՐ ՀՈԳԻՆ ԾԱՐԱ՛ ԻԸ ՈՒՆԻՐ ՍԻՐՈՅ: Այս հրաշալի գոյգ տողերն արդէն բանաստեղծական են եւ՝ շարունակուելին կ'ուզեն: Հապա՞ այդ տողերուն երաժշտականութիւնը: Երկրորդ նախադասութեան մէջ կարծես Սէրը գովերգող Ռուբէն Սեւակ կը կարդաս.

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր, Փոքրիկ աղջիկ, քեզի մեղք էր, Փոքրիկ ծոցիդ թիթեռ պէտք էր, Դուն խենթ արծիւ մը բանտեցիր-Դուն՝ սիրելի Սիրուն, ամէնուս ծանօթ քանի մը բառով, գեղանկարիչի մը նման, տեսողական պատկերներ է, որ կը գծես, միշտ հմայող եւ արեւի լոյսով պարուրուած: Ահա ատոնցմէ քանի մը օրինակ.

Իր մէջ թեթեւ հոգին էր՝ վազող

գետակի մը պէս՝ միշտ յստակ ու թափանցիկ:

Թափանցիկ արեւը ցերս կը ցատկէ դէմքին պաստառին վրայ:

Սուլեյմանիէի կոնակիս հանգչած սրահ:

Տատրակիս կուրծքը անմեղութեան սուրբ խորան է:

Ո՞վ կրնայ օրերու երթը կարդալ:

Հոս պզտիկ դիտողութիւն մը: Տատրակիս փոխարէն պէտք է Աղաւնի ըլլար: Տատրակը այնքան ալ մտերմ չէ մարդուն հետ եւ ճերմակ փետուրներ չ' ունենար:

Մեղամաղձոտ տխրութիւն մը կը տիրէ բոլոր գրուածքներու մէջ: Անցեալի դառն յիշողութիւնները հոգիիդ խորէն կու գան: Ներկան ալ սփոփիչ յոյսեր չի ներշնչէր: Գիտեմ, դժուար բան է մինակութիւնը: Ժամանակին, պզտիկ եղած ատեն ալ տխուր եղած ես ազգականներ չունենալու համար, որոնք, ինչպէս դուն կ'ըսես՝ «Անոնք բոլորն ալ տարագիր՝ հնձուած էին մահուան տողանցներու ընթացքին»:

Գիտեմ նաեւ, որ ժամանակին Պզտիկ Փարիզ (Petit Pariz) կոչուող Պէյրութը իր հայահոծ Պուրճ Համուտ շրջանով, այսօր բնաւ նման չէ անցեալ դարու 60-էն 80-ական թուականներու լուսաւոր տարիներուն, երբ Պէյրութ-Երեւան երթալ գալը ջուրի ճամբայի կը նմանէր: Հոս ալ շատ բան փոխուած է: Ընդհանրապէս, գրեթէ ամէն տեղ նոյն պատկերն է՝ հինի մոռացում, նախկիններու արժեգրկում: Այդպէս է կեանքին չգրուած օրէնքը բարեկամս: Եթէ բան մը, որ հինէն կու գայ եւ չի ժխտուիր, այլ պարզապէս մոռացութեան կը մատնուի՝ ադ ալ տեսակ մը միխթարական երեւոյթ մըն է:

Չըլլայ, որ հոռետեսութեան գիրկը առնէ քեզ: Դուն վաւերական, սիրուած գրող ես եւ պարտիս միշտ բարձր պատուանդանին վրայ մնալ:

- Ինչո՞ւ կը գրեմ այս տողերը, - որովհետեւ երկար լուծիւնդ ինձի կը նեղէ: Յիշէ սա անուշիկ տողերդ եւ լաւատեսութեամբ գինուէ:

...Վարդ ու ծաղիկ, տերեւներ եւ ճիւղեր կը դողդողային այդ սիրահար աչքերուն դիմաց:

Ինքդ նայէ, թէ որքան սէր դրած ես գրածդ երկտողին մէջ, սէր՝ բնութեան եւ մարդու նկատմամբ: Ամբողջ գիրքիդ մէջ սիրոյ տողերը չեն պակսիր, մանաւանդ՝ հարազատներու հանդէպ: Սէր գովերգէ, սէր՝ հարազատիդ, մարդոց Հայրենիքիդ, բնութեան հանդէպ: Աշուղներէն մին կ'ըսէ՝ «Առանց սիրոյ, սուտն աշխարհ կ'աւիրի»:

Որպէս երգահան եւ գրող, ինձ համար երկու սրբութիւն գոյութիւն ունի՝ Հայրենիք եւ Սէր: Իմ բոլոր թէ երաժշտական եւ թէ գրական գործերուս մէջ կարմիր թելի նման կ'անցնի այդ զաղափարը:

Ինձի համար արեւմտահայ բանաստեղծներէն լաւագոյն սիրոյ երգիչը Ռուբէն Սեւակն է, որուն հինգ բանաստեղծութիւններու հիման վրայ, Պուլիս եղած ատեն, մէկ

գիշերուան ընթացքին հինգ երգ գրած եմ առանց դաշնակի: Ատոնցմէ մին՝ ՍէրԸ, հինգ տարի առաջ յոբելեանական երեկոյի ընթացքին կատարեց՝ լիբանանահայ շնորհալի երգչուհի Մարալ Բարսէղեանը՝ նուագախումբի ընկերակցութեամբ: Դիւրիժորն էր Արմէն Անասեանը: Տեսագրութիւնը կայ Youtube-ի մէջ, կրնաս դիտել Սիրուն ջան:

Յարգելի Սիրուն: Հայաստանի ամենամաղկուն տարիներուն, երիտասարդ տարիքիդ երեք անգամ հիւր գտնուած ես Հայրենիքիդ մէջ: 1967-ին եղած ես Հայաստանի Գրողներու Միութեան հիւրը: Քեզի յարգած, պատուած են վահագն Դաւթեան, Ստեփան Ալաճաճեան: Հաւաքի մը ընթացքին ներկայ եղած է բանաստեղծ Լեւոն Միրիճանեան, որը այդ նոյն օրերուն յօրինեց հետեւեալ բանաստեղծութիւնը, որը արագօրէն երգի վերածուեցաւ եւ տարածուեցաւ նաեւ Սփիւռքի մէջ: Ահա այդ երգի առաջին քառեակը.

Ով սիրու՞ն, սիրուն, ինչո՞ւ մոտեցար, Սրտիս գաղտնիքը ինչո՞ւ իմացար, Սի անմեղ սիրով ես քեզ սիրեցի, Բայց դու անիրաւ, արհամարհեցիր:

Ինչո՞ւ արհամարած ես երիտասարդին..., հա՛, հասկըցայ, սիրազեղ ամուսինդ՝ վահան Հաճեթեանը հորիզոնէն քայլերուդ կը հետեւէր: Կատակ է անշուշտ այս քանի մը տողը, պարզապէս՝ յոգնուածիս քիչ մը մուգ գոյները լուսաւորելու համար:

Հետաքրքիր գուգադիպութիւն: 2014 թ. Ապրիլ 24-ին, չնայած իր «առողջական դիւրաթեք վիճակին», ամուսինդ՝ վահանը չէ ուզած հիւանդանոց երթալ, հակառակը՝ ուզած է այդ օրը ներկայ գտնուիլ Յեղասպանութեանը նուիրուած հաւաքին, սակայն անտանելի ցաւերուն չդիմանալով, հոգին աւանդած է բնակարանին մէջ:

Ես ալ այս Ապրիլ 24-ին պիտի երթայի Հոլիվուդի մէջ կայանալիք հաւաքին, բայց նոյն օրը առտուան ժամը 7-ին զիս գտայ հիւանդանոցի մէջ: Ստամբուլ ինձմէ առաջ կը վազէր: Տասը ժամ քննեցին վարէն-վէրէն, ներսէն-դուրսէն: Վերջէն ալ ըսին՝ «Հայտէ՛. Արաբադ քաշէ, բան մըն ալ չունիս, սա դեղերը առ եւ ստամբուլ մաքրէ»:

- Իշտէ ասանկ բաներ, - պիտի ըսէր «ձերմակ անուրջներ» ֆիլմին հերոսներէն մին՝ Տէր Հօր դէրը խաղող տաղանդաւոր դերասան եւ ասմունքող Ազատ Գասպարեանը՝ պարոն Թումասին:

Գիտեմ, որ ճամբու վրայ ես եւ պիտի մեկնիս Կանադա՝ տղայիդ մօտ: Ետդարձիդ Նիւգարայի վրայն «ցատկէ», համա ուշադիր՝ ջուրը չիչնաս, եւ Լոս Անջելէս եկուր քրոջդ մօտ: Յուսամ Անժէլը բարի կը գտնուի եւ կ'արտօնէ գոնէ մէկ շաբաթ ալ մեր հիւրը ըլլաս: Չէ՞ որ մենք հեռուէն գիտենք միմեանց, ան ալ՝ դիմատարի միջոցաւ:

Ձեր ծանուցումները Կատարեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

Հայոց Ցեղասպանութեան 108-Ամեակի Ոգեկոչում Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Աթոռանիստ Եկեղեցւոյ Մէջ



Կիրակի, 23 Ապրիլ 2023-ի Ս. Պատարագէն ետք, նախագահութեամբ Արհիպատիւ Տ. Միքայէլ Եպս. Մուրատեանի, կազմակերպութեամբ Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ աթոռանիստ եկեղեցւոյ ժողովրդապետութեան եւ Գալիֆորնիոյ Հայ Քոյրերու Վարժարանին, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 108-ամեակի ոգեկոչում:



Բացման խօսքով, Հայ Քոյրերու Վարժարանի փոխնորէնուհի Տիկ. Ռիթա Պոյաճեան ողջունեց ներկաները, որոնք հաւաքուած էին յիշատակելու հայ ժողովուրդի պատմութեան ամէնէն դաժան ժամանակաշրջանը խորհրդանշող թուականը: Ան իր խօսքին մէջ յիշեցուց, որ 108 տարի անցած է հայուն դէմ գործուած ցեղասպանութենէն եւ տակաւին ցեղասպանը անպատիժ, իսկ զոհը անհատոյց կը մնան: Տիկ. Պոյաճեան նշեց, որ «108 տարուան ընթացքին մեր նահատակները սրբադասուեցան, մեր անժամանցելի դատը բազմաթիւ երկիրներու մէջ ճանաչում ստացաւ, ցեղասպանը դատապարտեցին իր արարքին համար, այսուհանդերձ, մեր կորուստներուն համար որեւէ հատուցում չստացանք: Եւ հատուցումը պէտք է գայ ցեղասպանէն. Թուրքիան է որ պէտք է ճանչնայ իր գործած անմարդկային արարքը, ներողութիւն խնդրէ հայ ժողովուրդէն եւ արեան ու հողային հատուցում կատարէ»: Ան նաեւ ընդգծեց, որ «108 տարուան ընթացքին փաստեցինք, որ պահանջատիրութիւնը սկզբունք է, պայքարը ոգի է, ու թերեւս դեռ երկար տարիներ պիտի պայքարինք ու պահանջենք, բայց այնքան ատեն որ մենք հայօրէն կ'ապրինք ու կ'արարենք աշխարհի վրայ, հայերէն կը խօսինք ու կը գրենք,

հայերէն կ'երգենք ու կ'աղօթենք, այնքան ատեն որ կը դաստիարակենք հայրենասէր եւ հայրենատէր հայ սերունդներ, մեր հայրենիքին կողքին կը կանգնինք իր լաւ ու մանաւանդ վատ օրերուն, այնքան ատեն որ միասնական ենք ու չենք զլանար մեր արդար իրաւունքներու պահանջէն, ապա Հայ դատը երբեք պիտի չմեռնի ու արդարութիւնը օր մը ԱՆՊԱՅՄԱՆՕՐԷՆ պիտի յաղթանակէ»:

Գեղարուեստական բաժնով հանդէս եկաւ Հայ Քոյրերու Վարժարանին պարախումբը՝ «Ատանա» պարով, պարուսոյց՝ Լուիզա Խաչատրեան:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ երիտասարդութեան խօսքը հայերէնով փոխանցեց Էնթրի Արոյեան: Ան նշեց, որ 108 տարի առաջ երիտասարդներու սկսած գործը տակաւին կը շարունակուի. Օսմանեան կայսրութեան ժառանգորդ Թուրքիան կը շարունակէ



իր նախնիներուն գործը, ձեռք-ձեռքի բռնած Ատրպէյճանին հետ, Արցախի մէջ եւ Սիւնիքի լեռներուն վրայ: Արոյեան ըսաւ, որ հայրենիքէն հարիւրաւոր մղոններ հեռու, մեր պայքարը կը շարունակենք սպիտակ ջարդին դէմ, որ կը դրսեւորուի հայերէն չխօսելով, հայերէն երգերն ու պարերը մոռնալով: Ան ընդգծեց, որ նոյնիսկ ամէնէն ազգասէր ու ինքնավստահ մարդիկ կրնան ձուլուիլ եթէ իրենց արմատները մոռնան, որոնք պահելը պարտականութիւն համարեց: Չձուլուելու եւ մեր ինքնութիւնը պահելու համար, Արոյեան հրամայական համարեց ընտանիք-դպրոց-եկեղեցի երրորդութեան սերը եւ այս երեքին ճամբով Հայ սերունդները պատրաստելը, հայկական աւանդութիւնները պահելը: Ապա, Հայ Քոյրերու Վարժարանին երգչախումբը կատարեց «Հանգչեցէք», «Կիլիկիա» եւ «Հայաստանի բալիկն ենք» երգերը, դաշնամուրի նուագակցութեամբ Տիկ. Կարինէ Տէր Գէորգեանի:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ երիտասարդութեան խօսքը անգլերէնով ներկայացուց Նինա Մենձյակոբեան, լուսարձակի տակ առնելով այն իրողութիւնը, որ ժամանակին թերթերու մէջ հարիւրաւոր յօդուածներ գրուած են Հայոց ցեղասպանութեան մասին պատմող, մինչ այսօր արուեստը կ'օգտագործենք բացառապէս եւ հասկնալու Ցեղասպանութիւնը, որովհետեւ արուեստն է որ կը պահէ պատմութիւնը, եւ այդ պատճառով ալ ցեղասպանը ոչնչացուցած է հայկական արուեստի պատմական կոթողները: Մենձյակոբեան նշեց, որ հայկական արուեստը օգտագործելով Հայոց ցեղասպանութիւնը կրնայ թափանցել հան-

չկրցաւ ճշգրիտ դեր խաղալ հայերուն հետ, բայց յոյս յայտնեց, որ արուեստը պիտի օգնէ յոյս սփռելու իրողութիւններուն վրայ:

Հայ Քոյրերու Վարժարանին պարախումբը բեմ բարձրացաւ ու ներկայացուց երկրորդ պար մը՝ «Հայաստան»:

Աւարտին, արհիպատիւ Տ.



Միքայէլ Եպս. Մուրատեան շնորհակալութիւն յայտնեց յայտագիրը պատրաստողներուն, որոնք միաժամանակ ապրեցուցին մեր մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը, նաեւ ներկայիս Արցախի ժողովուրդին ապրած ճգնաժամային պայմանները: Գերապայծառը նշեց, որ հայ ժողովուրդը դարերու ընթացքին եղած է ազատատենչ ժողովուրդ եւ իր ազատութեան ոգիով ապրած է, ստեղծագործած է ու դաստիարակած է սերունդներ, եւ այդ ազատութեան համար է որ Արցախի մեր հայրենակիցները կը պայքարին: Ան ընդգծեց մեր զօրաւոր գէնքը, որ մեր հաւատքն է այն Աստուծոյ, որ մեզի պարգեւած է ազատութիւնը: «Մենք այս մասնակներուն երգերով ու պարերով կը փաստենք, որ մեռնող-կորստող ժողովուրդ չենք, հակառակ բոլոր դժուարութիւններուն ու ցաւերուն կանք եւ այս ժառանգութիւնը կը փոխանցենք սերունդներուն», եզրափակեց Մուրատեան:

Այնուհետեւ, հոգեւոր դասին ընկերակցութեամբ, ներկաները երկեղեցւոյ շրջափակին մէջ մասնակցեցան մատաղի օրհնութեան:



րային գիտակցութիւն: Ան սալիկներով ցուցադրեց արուեստի կտորներ, որոնք կը խորհրդանշեն Ցեղասպանութիւնը, հայերու թափած անմեղ արիւնը, հայ ազգին վերածնունդը եւ մոխրիներէն յառնելու կամքը: Ան վստահութիւն յայտնեց, որ հայկական մշակույթը, երաժշտութիւնը եւ արուեստը հայոց պատմութիւնը կը ներկայացնեն տարբեր տեսանկիւնէ, պատմութիւն մը որ պէտք է յիշուի: Երիտասարդուհին իր խօսքը եզրափակեց՝ ըսելով, որ Հայոց ցեղասպանութեան տարիներուն, 44-օրեայ պատերազմին ընթացքին եւ նոյնիսկ այսօր լրատուութիւնը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՍ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Հռոմի Ս. Բարթոլոմեոսի Եկեղեցւոյ Մէջ Միջեկեղեցական Աղօթք Նուիրուած Հայոց Ցեղասպանութեան Սուրբ Նահատակներու Յիշատակին



Սուրբ Աթոռի Հայ Եկեղեցւոյ ներկայացուցչութեան, Քահանայապետական Լեւոնեան կաթողիկ / կաթողիկէ / հայ վարժարանի, Սուրբ Աթոռի եւ Իտալիոյ մէջ ՀՀ դեսպանութիւններու կազմակերպութեամբ սոչն թուականի 27 Ապրիլին, Հռոմի Ս. Բարթոլոմեոսի եկեղեցւոյ մէջ միջեկեղեցական աղօթք կատարուեցաւ՝ Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակներու յիշատակին նուիրուած:

Արարողութեան ներկայ էին Սուրբ Աթոռի Անգլիկան եկեղեցւոյ ներկայացուցիչ արքեպիսկոպոս Եան Էննեստը, դպտի ուղղափառ, ռուս ուղղափառ, կաթողիկ / կաթողիկէ, անգլիկան, աւետարանական-լուտերական եւ մեթոտիստական եկեղեցիներու ներկայացուցիչներ, Comunity di Sant'Egidio միջազգային մարդասիրական հասարակական կազմակերպութեան նախագահ Մարկո Իմպալիացոն, հասարակական եւ քաղաքական գործիչներ, բազմաթիւ դեսպաններ, լրագրողներ, ինչպէս նաեւ հայ հոգեւորականներ եւ հաւատացեալներ:

Միջոցառումի սկիզբը Ս. Բարթոլոմեոսի եկեղեցւոյ լուսարարապետ Հայր Անճելօ Ռոմանոն բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Ապա ողջոյնի խօսքով հանդէս եկան Սուրբ Աթոռի եւ Իտալիոյ մէջ ՀՀ դեսպաններ՝ տիար Կարեն Նազարեանն ու տիկին Մովինար Համբարձումեանը:

Արարողութիւնը նախագահեց եւ իր պատգամը հղորդեց Սուրբ Աթոռի Քրիստոնեաներու միասնութեան նախագահ՝ Վսեմաշուք քարտինալ Կուրտ Գոխ: Իր բազմաբովանդակ քարոզի մէջ ան նախ լիչեցուց, որ հայոց ցեղասպանութեամբ սկսաւ երկրորդ հազարամեակի վերջին եւ երրորդ հազարամեակի սկիզբի բազմաթիւ քրիստոնեաներու նահատակութեան ողբերգական պատմութիւնը: «Մենք մեծ երախտիք եւ պարտք ունինք հայ քրիստոնեաներու առջեւ, որ իրենց կեանքով վկայեցին, թէ ինչ կը նշանակէ նահատակութիւն: Այս բառը կու գայ յունարէն «martyr» բառէն, որը կը նշանակէ «վկայ»: Քանի որ նահատակը՝ մարտիրոսը,

հաւատքը կը վկայէ ոչ միայն իր խօսքով, այլեւ՝ իր վարքով, ուստի ան կը դասուի հաւատքի ամենաարժանի վկաներու շարքին», - ըսաւ ան:

Քարտինալը հայ նահատակներու օրինակով հաստատեց, որ նահատակութիւնը էքիւմէնիք է եւ նահատակներու էքիւմէնիզմը, կամ ինչպէս Ֆրանչիսկոս պապը կ'ըսէ՝ «արեան էքիւմէնիզմը», անկասկած, այսօրուան էքիւմէնիզմի ամենահամոզիչ յատկանիշն է:

Քարտինալ Գոխը մտաբերելով քանի մը քննադատական փրփոտիւները, արտայայտեց անոնց այն միտքը, որ իրական արդարութիւնը կը պահանջէ վերացնել ոչ միայն այսօրուան մարդկութեան, այլեւ «անդառնալի անցեալի» տառապանքները: Ատոր համար բաւական չէ, որ մարդիկ յիշատակեն պատմութեան գոհերը պէտք է, որ վերջիններու անունները գրուին Աստուծոյ կենդանի յիշողութեան մէջ, ուստի չի կրնար ըլլալ արդարութիւն՝ առանց գոհերու յարուսթեան:

Ան նշանակալից համարեց այն, որ հայ նահատակներու ոգեկոչումը կը համընկնի Ջատիկի տօնական շրջանին հետ: Քարտինալի համոզմամբ, նահատակներու հաւատքի վկայութիւնը իրապէս կ'ամրացնէ քրիստոնեաներու յարութեան յոյսը, որով անոնք կրիսեցին Յիսուսի տառապանքները, կրիսեցին նաեւ անոր յարութիւնը եւ յաւերժական կեանքը Հօր հետ:

Քարտինալ Գոխը իր պատգամը աւարտեց հետեւեալ խօսքերով. «Այս երեկոյ Սբ. Բարթոլոմեոսի եկեղեցւոյ մէջ հաւաքուած ենք ոգեկոչելու նահատակներու յիշատակը այն յոյսով, որ Աստուծոյ մօտ բնակութիւն ստանալու այսօրուան Աւետարանի խոստումը արդէն կատարուած է իրենց համար: Նահատակուած հայ քրիստոնեաներուն կը յանձնենք Աստուծոյ փրկարար սիրոյն, բայց եւ կը խնդրենք անոնց բարեխօսութիւնը, որ իրենց աղօթքներով ուղեկցին մեզ մեր հաւատքի վկայութեան մէջ, եւ յատկապէս, սատար կանգնին այն բազմաթիւ քրիստոնեաներուն, որոնք այսօր կը հալածուին

«Մենք» Ձահակիւր Հայ Մշակոյթի

Շարունակուած էջ 11-էն

փայլուն աստղն էր «Լարք»ի վաստակաշատ ղեկավարներէն՝ հանրաճանաչ ամուսնաբող Թագուհի Արզումանեան, որ մեծ ապրումով արտասանեց Գէորգ Էմինի «Մենք»ը:

Ներկաները՝ իրախուսական ծափահարութիւններով, իրենց հիացումը արտայայտեցին շուրջ երկու տասնեակ պատանիներու կատարումները լսելով: Արդարեւ երաժշտական տարբեր գործիքներով Վրայ (Չուժակ, ԹաւՉուժակ եւ դաշնամուր) անոնց շնորհալի կատարումները՝ մթնոլորտը յագեցուցին հայ անուանի երգահաններու (Խաչատուրեան, Կոմիտաս, Միրզոյեան) յօրինումներով: Այսպիսով՝ նոր սերունդի մօտ առաւել եւս փառաւորուեցաւ հայ երգն ու երաժշտութիւնը: Անոնք՝ իրենց տքնաջան աշխատանքներով, յարատեւութեամբ եւ որակեալ ուսուցիչներու առաջնորդութեամբ, նախադրեալներն են ապագայ ձեռքբերումներու:

«Լարք»ի մանկական «Միածան» երգչախումբի երեք տարբեր դասաւորումներն իրենց հայաբոյր երգերով, պանծացուցին քաղցրահնչուն բառերով արտաբերուող մեր մայրենիին, խմբավարութեամբ Ալեանուշ Եղնազարի եւ տնօրինութեամբ ձենի Միրզոյեանի:

Երաժշտական յայտագրի դափնեպսակն էին «Տաւիղ» պարի համոյթներու գեղարուեստական կատարումները: Արդարեւ, երեք տարբեր պարախումբեր, իրենց հեզաճկուն, համաչափ, գունագեղ ու ներդաշնակ ելոյթներով (Միրանի ծառ, Տլէ Եաման, Տաւիղ, Ալ Այլուղս, Հայաստան եւ Քոչարի) պա-

րերով ու հիասքանչ տարագներով բարձրացուցին ներկաներու տրամադրութիւնները եւ հանրատեսը փոխադրեցին մեր երազային ապրումներու վայելքին գիրկը: Յատկանշական էր աղջիկներէ բաղկացած «Քոչարի» պարը, որ կարծէք մեր վեհանձն սարերէն եկած քաջամարտիկներ ըլլալին, իրենց խորիմ ու ներդաշնակ քայլերով եւ կատարողական արուեստով: (Գեղարուեստական ղեկավար Լուիզա Խաչատրեան):

Արդարեւ «Լարք»ի վարուժան Մովսէսեան կեդրոնէն ներս ներկաներն ըմբոշինեցին գեղարուեստական հաճելի ու բազմերանգ յայտագիր մը: Միջոցառման աւարտին ծրագրի անխոնջ ղեկավար եւ սիրուած արուեստագիտուհի Թագուհի Արզումանեան, փակման խօսքին մէջ իր հայեացքն ուղղելով նորահաս սերունդին ըսաւ. - «Մենք քայլում ենք մեր նախնիների ոյժերով: Ուզում եմ որ մշտապէս հայ ապրին, հայ երգը պանծացնեն ու հայերէն խօսին: Ունենան հաւատք դէպի լուսապայծառ ազգայն»: Այնուհետեւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն, մասնաւորաբար մանկավարժական կազմին, հովանաւորներուն, ծնողներուն եւ ձեռնարկի յաջողութեան սատարողներուն:

Մենք եւս կը շնորհաւորենք «Լարք» երաժշտանոցի կազմակերպած «Մենք ուսանողական հիասքանչ համերգը, մասնաւորաբար սիրուած անխոնջ ղեկարար Թագուհի Արզումանեանն ու ծրագրի յաջողութեան սատարողները:

Բարի երթ «Լարք»ին ու «Մենք»ին: Գ.Մ.

Շնորհահանդէս «Անսրլեան Գերդաստան»

Շարունակուած էջ 12-էն

բերութեամբ»:

Երբ սկսել էինք մեր գրութիւնը այս գրքի մասին, յանկարծ Դիմատետրի էջի վրայ Երեւանից եկաւ մի պատգամ. «Կարինէ Չան, բարի օր: Յուսամ լաւ էք, առողջ: Տեսայ, որ հինգշաբթի Անսրլեաների գերդաստանի մասին գիրք է ներկայացուելու: Ինձ հետաքրքրում է մի հարց. պղնձագործ Մովսէս, Պետրոս, Նազար, Լեւոն, Պարգեւ, Յակոբ, Աւետիս Անսրլեանները նոյն ընտանիքից են»:

Անշուշտ որ պատասխանս էր՝ «այո»:

Նկարիչ Հրազդան Թոքմաշեանը մասնագէտ է հայկական ազգային արժէքների՝ ձեռագործներ, գորգեր, հնութիւններ եւ այլն: Նահատարակել է գրքեր Մարաշի, Այնթապի ասեղնագործութեան մասին, պղնձագործ Գալմէմբերեանների մասին: Այժմ պատրաստում է Հայկազի եւ շրջակայքի պղնձագործների մասին գիրքը, որ պա-

րունակում է 50 պղնձագործների եւ նրանց գործերի լուսանկարները (հանգուցեալ Ռուբէն Պարսումեանի արխիւից, Հայկա) եւ... այնտեղ են բոլոր Անսրլեանները: Անհամբեր է ունենալու այս գիրքը՝ չաւելու համար մանրամասնութիւններ այս արհեստաւորների մասին:

Ուրեմն, չնայած Եղեւնից վերապրածների պատմութիւնները «իրարու կը նմանին», սակայն «Անսրլեան գերդաստան»ի պատմութիւնը լոյս է սփռում մեր պագի անկրկնադարձային շրջանների մասին՝ թէ՛ նոր, թէ՛ հին. նոր՝ Պէյրուսի Ամերիկեան դեսպանատան պայթիւթումը, ուր գտնուում էր այնտեղ աշխատող մի հայ, որ օգնել էր բազմաթիւ հայերի ստանալու համար օրինաւոր անցագրեր, հին՝ Հայկազի մէջ պղնձագործութիւնը զարգացնող արհեստաւորները, որոնց թւում էր Անսրլեան գերդաստանը:

Այսպիսի պատմութիւններով էլ կերտուում է մեր պատմութիւնը:

Եւ պիտի նահատակուին»: Քարտինալը աղօթական ոգիով շնորհակալութիւն յայտնեց հայ ժողովուրդին իր հաւատքի վկայութեան համար, որովհետեւ Հայը իր կեանքով արժանահաւատօրէն հետեւեցաւ Պետրոսի /Ա. թուղթ, 3.15-17/ պատգամին եւ մահը վեր դասելով կեանքի բոլոր հաճոյքներէն՝ չարաչարանքով մարտիրոսութեան օրինակ դարձաւ:

Յաւարտ աղօթքի՝ Սուրբ Աթո-

րի մէջ Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչ՝ Գերշ. Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան շնորհակալական խօսք ուղղեց:

Այնուհետեւ, եկեղեցւոյ լուսարարապետը բոլոր ներկաները հրաւիրեց իր ուղեկցութեամբ շրջայց կատարելու եկեղեցւոյ ստորգետնեայ դամբարանին մէջ գրեթէ ամիս մը առաջ բացուած XX-XXI-րդ դարու Նոր նահատակներու յուշաթանգարանը:

Ստացանք
«Քերթուածներու Հաւաքածոյ»
Հեղինակ՝ Գէորգ Պետիկեան
Լոս Անճելոս 2023

Աշխարհի Գաւաթ. Արթուր Դաւթեանը Ոսկէ Սետալակիր



Թոքիոյի Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր, աշխարհի ախոյեան, Եւրոպայի կրկնակի ախոյեան Արթուր Դաւթեանը նուաճեց իր երրորդ ոսկէ մետալը աշխարհի գաւաթի խաղարկութեան հանգրուաններուն:

Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի մէջ աւարտող սպորտային մարմնամարզութեան աշխարհի գաւաթի խաղարկութեան վերջին եւ 4-րդ հանգրուանին մրցաշարին Հայաստանի հաւաքականի առաջատարը հաւասարը չունեցաւ յենացատկի վարժութեան մէջ:

Եզրափակիչին Արթուր Դաւթեանը փայլուն ցատկերով վաստակեց 15.166 կէտ եւ դարձաւ ոսկէ մետալակիր:

Եգիպտոսի մէջ աւարտած աշխարհի գաւաթի վերջին հանգրուանին արծաթէ մետալակիր դարձաւ Գագիկ Խաչիկեանը (նժոյգ թափեր), պրոնզէ մետալակիրներ՝ Յարութիւն Մերտինեան (նժոյգ թափեր) եւ Արթուր Աւետիսեան (օղակներ):

Յիշեցնենք, որ Հայաստանի հաւաքականը անցած երեք հանգրուաններէն մասնակցած է երկուսին: Երրորդ փուլը տեղի ունեցած է Պաքուի մէջ, որուն Հայաստանի խումբը չէ մասնակցած:

«Մանչեսթըր Սիթի» Առաջին Դիրքի Վրայ

Անգլիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթըր Սիթի»-ն Լոնտոնի մէջ հիւրընկալեց «Ֆուլհեմին» եւ պարտութեան մատնեց 2:1 արդիւնքով՝ բարձրանալով առաջին տեղ:

«Մանչեսթըր Սիթի» 32 խաղէ յետոյ ունի 76 կէտ: Երկրորդ տեղը նահանջած Լոնտոնի «Արսենալը» 33 խաղէն վաստակած է 75 կէտ:

«Պայրըն» Միւնիխ Յաղթեց Եւ Դարձեալ Գլխաւորեց Մրցաշարային Աղիւսակը

Գերմանիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին ախոյեան «Պայրըն» Միւնիխի մէջ ընդունեց վերջին դիրքը գտնուող «Հերտային» եւ յաղթակի հասաւ 2:0 արդիւնքով:

«Պայրըն» 62 կէտով դարձեալ գլխաւորեց մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտի առաւելութիւն ունի երկրորդ տեղը գտնուող Տորթմունթի «Պորուսիայի» նկատմամբ, որ այս հանգրուանին 1:1 արդիւնքով հաւասարեցաւ «Պոխումի» հետ:

«Պարսելոնա» Եւ «Ռեալ» Յաղթական

1	Barcelona	33	26	4	3	60	11	49	82
2	Real Madrid	33	21	5	7	69	32	37	68
3	Atlético Madrid	32	20	6	6	55	25	30	66
4	Real Sociedad	33	18	7	8	43	29	14	61

Սպանիոյի առաջնութեան 32-րդ հանգրուանին առաջատար «Պարսելոնան» ընդունեց Սելիլիայի «Բետիսին» եւ առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

«Ռեալը» Մատրիտի մէջ մրցեցաւ «Ալմերիայի» հետ եւ առաւելութեան հասաւ 4:2 արդիւնքով:

«Պարսելոնան» 79 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ռեալիէն»:

ՊՍԺ-ն Պարտութիւն Կրեց Սեփական Խաղադաշտին Վրայ

Ֆրանսայի առաջնութեան 33-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Լորիանի» հետ եւ պարտութիւն կրեց 1:3 արդիւնքով:

ՊՍԺ-ն 75 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Մարսելէն», որ մէկ խաղ քիչ կատարած է: «Լորիանը» 10-րդն է եւ 48 կէտ ունի:

Հայաստանի Պասքեթպոլի Հաւաքականը Լոս Անճելըսի Մէջ Ընկերական Խաղեր Կ'ունենայ Ֆրանսայի Հետ

Հայաստանի պասքեթպոլի հաւաքականը ԱՄՆ-ի մէջ ընկերական հանդիպումներ կը կատարէ Ֆրանսայի ընտրանիին հետ:

Այս մասին կը յայտնէ Հայաստանի պասքեթպոլի ֆետերացիան:

Այս տարուան Յունիսի 16-ին եւ 17-ին Հայաստանի ու Ֆրանսայի հաւաքականները ընկերական խաղեր կը կատարեն Լոս Անճելըսի մէջ:

Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Ռեքս Քալամեանը, ով «Տիթրոյիթ Փիտըրնս»-ի գլխաւոր մարզիչի օգնականն է այս խաղը մեծ իրադարձութիւն կը նկատէ:

«Անցեալ տարի մենք յաղթեցինք ՖԻԲԱ-ի փոքր երկիրներու առաջնութեան մէջ, իսկ այսօր կը ցանկանք մասնակցիլ աշխարհի առաջնութեան ընտրական փուլի խաղերուն: Այդ իսկ պատճառով Լոս Անճելըսի մէջ կը կատարենք ուսումնամարզական հաւաք եւ ընկերական խաղեր: Ես ոգեւորուած եմ, որ Ֆրանսան համաձայնած է գալ եւ մասնակցիլ այս 2 խաղերուն, անոնք աշխարհի ուժեղագոյն խումբերէն են: Հայաստան - Ֆրանսա խաղը հիանալի հնարաւորութիւն պիտի ըլլայ Գալիֆորնիայի մէջ ապրող հայերու համար ներկայ գտնուիլ խաղերուն եւ աջակցիլ Հայաստանի հաւաքականին»:



Տին Լիրեն Յաղթեց Եւ Նեպոմյաչչուին Եւ Նուաճեց Գատրակի Աշխարհի Ախոյեանի Տիտղոսը



Չինացի Տին Լիրենը նուաճեց գատրակի աշխարհի ախոյեանի տիտղոսը: Թայ-պրէյքի չորրորդ խաղին սեւերով 68-րդ քայլին պարտութեան մատնեց ռուս Եւան Նեպոմյաչչուին եւ առաւելութեան հասաւ 2,5:1,5 արդիւնքով:

Տին Լիրենը դարձաւ աշխարհի 17-րդ ախոյեանը: Ան այդ յաջողութեանը հասած առաջին չինացին է:

«Ինթեր» Յաղթանակի Հասաւ «Լացիոյի» Նկատմամբ

Իտալիոյ առաջնութեան 32-րդ հանգրուանին փոխախօյեան Միլանի «Ինթերը» ընդունեց Հռոմի «Լացիոյին» եւ յաղթանակի հասաւ 3:1 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Ինթեր» հիմնական կազմին մէջ էր: Ան 27-րդ վայրկեանին գրաւեց մրցակիցի դարպասը, սակայն խաղէն դուրս վիճակի պատճառով կոլը չարձանագրուեցաւ: Մխիթարեան փոխարինուեցաւ 61-րդ վայրկեանին:



«Լացիոն» 61 կէտով երկրորդ տեղն է եւ 17 կէտ ետ է առաջատար «Նափոլիէն»:

«Ինթեր» 57 կէտով չորրորդն է: Նափոլին այս հանգրուանին հաւասարեցաւ «Սալերնիտանայի» հետ եւ այդպիսով յետաձգեց ախոյեանութեան հասնիլը: Խումբը կրնայ յաջորդ հանգրուանին նուաճել իր երրորդ ախոյեանական տիտղոսը: